№ 78 ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 5 1897 ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 5 № 78

ՔԱԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
ՏԷԼԷՖՈՆ № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՏԷԼԷՖՈՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱԲԱԹՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը՝ թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը 2 ռ., ամսական՝ 1 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ։ Օտարաքաղաքացիները պէտք է դիմեն հետեւեալ հասցէով՝ Тифлисъ. Редакція «МШАКЪ»։ Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պէտք է մրցել. Շատ ուշ է.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատենագրութիւն. Նամակ Երեւանից. Նամակ Շուլավէրից. Նամակ Մեղրիից. Նամակ Բալախանիից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Թիւրքիա և թէսալիական հարցը. Հնդկաստանի վիճակը. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից. Նամակ Բոլգարիայից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Անգլիայից.

ՊԷՏՔ Է ՄՐՑԵԼ.

Երբ տարիներ առաջ Կովկասում նոր էին շինվում արագ և յարմար հաղորդակցութեան ճանապարհներ, որոնք բաց էին առնում մեր երկրի կրծքի տակ թաղված բնական անհուն հարստութիւնները կուլտուրական ազգերի շահագործող մեծ ձեռնարկութիւնների առաջ, „Մշակը“ շարունակ կրկնում էր, որ այժմ կամ պէտք է դէն դնել նահապետական փտած կարգերը ու, զինվելով ժամանակակից գիտութեան և գործավարութեան բոլոր միջոցներով, դիմադրել օտար մրցութեան, թոյլ չը տալ, որ մեր հարստութիւնները նրա ձեռքն անցնեն, այլ կանոնաւոր կերպով շահագործվեն մեր ոյժերով,—կամ թէ պէտք է ասպարէզը տալ օտարներին, յանձնել նրանց մեր հարստութիւնները և բաւականանալ ծառայելով օտարներին, լոկ ականատես լինելով թէ ինչպէս են այդ հարստութիւնները անդառնալի կերպով դուրս գնում մեր երկրից։ Այս երկու ճանապարհները բնական, արդար և անխուսափելի են առաջադիմութեան համար, լինի դա մտաւոր, թէ տնտեսական։

Շատ չէ անցել այդ ժամանակից, և այսօր մենք տեսնում ենք, որ այն, ինչ օրէնք է աշխարհի համար, չէ կարող բացառութիւն կազմել մեզ համար։ Այսօր մեր երկրի խոշոր արդիւնաբերական ձեռնարկութիւնները միմեանց ետեւից անցնում են օտար երկիրներից եկած ընկերութիւնների ձեռքը։ Ապացոյց այն փաստերը, որոնք վերջերս տեղի ունեցան մեր երկրի ամենախոշոր արդիւնաբերութեան, այն է՝ նաւթագործութեան կենտրոնում։ Մենք յիշում ենք թէ ինչ աղմուկ բարձրացաւ մամուլի և արդիւնաբերական շրջանների մէջ, երբ խոշոր դրամատէր Բոշիլդ գործ սկսեց Բաքուի մէջ։ Ամենքն ասում էին թէ այդ ֆիրման հետզհետէ կը նուաճէ մեր արդիւնաբերութիւնը և մաս ձեռնարկողներին կը ստրկացնէ։ Սակայն, իրողութիւնը այդ աղմուկներից մազի չափ չը փոխվեց. այդ բաւական չէ, նա նոյն իսկ սովորական, շատ հասարակ երեւոյթ դարձաւ, որի հետ հեշտ հաշվեցին, երբ մանաւանդ հաստատ հիմք ստացաւ այն յոյսը, թէ Բոշիլդ առաջին և վերջին օտար ֆիրման է, որ մտել է մեր երկիրը և շահագործում է նրա հարստութիւնները։

Բայց բնական օրէնքը երբէք չէ խնայել անկուլտուրական ժողովուրդներին և երբէք կանգ չէ առել յոյսերով և երազներով ապրող ծոյլերի ցանկութեան առաջ։ Անցեալ տարվանից օտար կապիտալիստների ձեռքն անցան կամ անցնելու վրա են Թաղիեվի և Ցատուրեանի խոշոր գործերը։ Իսկ այժմ մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ նաւթարդիւնաբերական մի այլ մեծ ընկերութիւն, Շիբաեվ, նոյնպէս ծախում է իր բոլոր գործարանները ու հողերը մի արտասահմանեան ընկերութեան։ Ուրեմն, տեղի է ունենում գիտութեամբ, արդիւնաբերական եռանդով զինված ի կատարեալ յաղթութիւնը։ Այդ հզոր միջոցների առաջ միշտ բաց է եղել նուաճումների լայնարձակ դաշտ։ Եւ որովհետեւ տեղացիները տհաս, անպատրաստ գտնվեցան յաղթական արշաւանքի դէմ, նրանց մնում է յետ քաշվել, բաւականանալ արդիւնաբերութեան մանր, աննշան չափերով, այսինքն մի դրութեամբ, որ օտար խոշոր ֆիրմաներին ստրուկ մնալ է նշանակում։ Նշանաւոր է մանաւանդ այն հանգամանքը, որ Բաքուի նաւթային արդիւնաբերութիւնը խլում են նոյն այն ընկերութիւնները, որոնք մինչև այժմ մրցում էին մեր երկրի նաւթի դէմ միջազգային վաճառականներում։ Այժմ, տէր դառնալով կովկասեան արտահանութեան խոշոր մասերին, ամերիկական և անգլիական ընկերութիւնները հեշտութեամբ կարող են իրանց կամքին ենթարկել գները և չը վախենալ մրցութիւնից։ Ահա թէ ինչպէս են զօրեղները կատարեալ յաղթութիւն պատրաստում։

Ցաւալի է այս իրողութիւնը. ցաւալի է նկատել որ մենք չենք կարողանում պահպանել մեր հարստութիւնները մեր սեփական բարօրութեան համար։ Դա աբհասութեան ապացոյց է։ Մի երկիր, որ չունի արդիւնաբերական յատուկ, յարատեւ եռանդ, որ չէ ձգտում կատարելագործութեան հասցնել իր ներքին արտադրութիւնները, իր հում նիւթերի մշակութիւնը, միշտ օտար, աւելի ընդունակ տարրերի հարստահարութեան և շահագործութեան առարկայ է դառնում։ Այդ դրութիւնից դուրս գալու համար հարկաւոր է լոյս, լուսաւոր միտք. պէտք է աշխատել, գիտութեան բոլոր պահանջները կատարել և այն էլ՝ մեր բազմացող երկրի բոլոր ոյժերի համերաշխ գործակցութեամբ մտաւոր և անտեսական առաջադիմութեան ասպարէզում։

Մեր ահասութիւնը, մեր յետամնացութիւնը այս պարտականութիւնն է ցոյց տալիս...

ՇԱՏ ՈՒՇ Է

Կայսեր՝ արդեօք վերջնական հաշտութիւն Թիւրքիայի և Յունաստանի մէջ, թէ պատերազմական գործողութիւնները նորից սկսվելու են—ահա մի հարց, որին ոչ ոք, նոյն իսկ եւրոպական մեծ պետութիւններից ոչ մէկը չէ կարողանում մի գրական պատասխան տալ։ Կիսալուսինը յաղթող հանդիսացաւ խաչի վրա պատերազմի դաշտում։ Նա յաղթող է հանդիսանում և դիպլոմատիական ասպարէզում։ Ամբողջ երկու ամիս Թիւրքաց կառավարութիւնը ամեն տեսակ խորամանկութիւններ գործադրելով, զանազան սպառնալիքներ կարդալով, կոչում անելով իսլամի նուիրական սկզբունքներին, որոնք, իբր թէ, չեն թոյլատրում որ իսլամի զէնքով նուաճված երկիրը վերադարձնվի, դիմադրում է Եւրոպայի կամքին և եւրոպական վեց պետութիւնների կոնցերտը անզոր է հանդիսանում վերջ դնել նրա յամառութեան. նոյն իսկ սպառնական ուլտիմատումները չեն ազդում նրա վրա։ „Այստեղ կամ և կը մնամ, և եթէ կարող էք, եկէք դուրս արէք ինձ“, ասում է յաղթական Թիւրքը, լաւ իմանալով որ ոչ ոք չի գայ դուրս անելու։ Եւ վստահ, որ ոչ ոք չի համարձակվի ոյժով դուրս անել իրան իր նուաճած երկրից, նա ամենայն եռանդով մրցունում է Թիւրքական կարգերը այդ երկրում, անկում է ամեն տեղ կիսալուսնի դրոշակները, աւերում, քանդում, կործանում է քրիստոնեայ գիւղերը, քաղաքները, և պատերազմական նոր պատրաստութիւններ է տեսնում։

Թիւրքիան շատ լաւ իւրացրել է իր մեծագոյն և զեկավարի՝ գերմանական քաղաքականութեան այն նշանաբանը, թէ inter arma silent leges—զէնքի ոյժը ջնջում է օրէնքը և իրաւունքը։ Իսկ նա առանց այդ նշանաբանի էլ վաղուց ջնջել է ամեն իրաւունք։

Զարմանալին այն է, որ իրանք՝ մեծ պետութիւնների քաղաքականութիւնը վարող դիպլոմատներն էլ չը գիտեն թէ որքան երկար պէտք է տեւի Թիւրքերի յամառութիւնը և երբ պէտք է աւարտվեն անվերջ բանակցութիւնները։ Այս օրերս, այն է յունիսի 24-ին, երբ անգլիական լորդերի պալատում լորդ կոնեմարա հարցապնդում արեց Սալսբիւրիին, թէ ե՞րբ պէտք է վերջանան հաշտութեան բանակցութիւնները, Անգլիայի առաջին մինիստրը պատասխանեց. „Ես միանգամայն համաձայն եմ ազնիւ լորդի հետ, որ հաշտութեան ձգձգումը կարող է վատագոյն հետեւանքներ առաջ բերել։ Որքան ես գիտեմ, մեր կառավարութիւնը ստացել են և, բանէ, արտաւորեր են իրենց դարձնաղարդ երիտասարդութեան ապիտակ պատմուճան։

Երրորդ պատճառը գրական սքանդալ մ'է, որ երբէք չը կրնար արդարանալ։ Իսկ չորրորդ գլխաւոր գայթակղութեան առիթ տուել է վեր. Կարապետ Գրիգորեան, ապաստարանի հիմնարկութեան գաղափարը ծնանող, նրա անօրէնը, այսինքն նա, որ իր ուսումը Ամերիկայի աստուածաբանական ճեմարանների միոյն մէջ առնելով և Եղղպտի մէջ մի քանի տարի հովուութիւն ընելով, ամուսնանալով, երկու աղջիկ զաւակներ ունենալով հանդերձ, զիջած է մի աննկարելի սրբապղծութեան, ապօրինի յարաբերութիւն ունենալով օտարուհոյ մը հետ և ապօրինի զաւակ ունենալով։ Ի՞նչ աննկարելի սքանդալ. այսօր հայերու ապաստարանի վերայ քիչ շատ գաղափար ունեցող մարդիկ գիտեն այս ամեն և հայեր այլ ևս չեն կրնար կենալ, համակրութեան արժանի լինել։ Ի՞նչ օգուտ, եթէ հայերու բարեկամաց միջազգային ընկերութիւն Անգլիոյ մէջ բանախօսութիւններ տայ և մարած համակրութիւնը զարթուցանել ջանայ, քանի որ բարոյական ազդեցութիւնք և վատ համբաւ կը ապանեն ժողովրդեան զգացումներ և համարում։ Լաւ է որ այս տեսակ Քրիստոսի ապակերներ, կրօնասիրութեան դիմակին տակ մոլի և անճնահաճոյ մարդիկ, հեռանան յանուն ազգի կատարուած մարդասիրական ձեռնարկութիւններէ։ Մեծ են, յիրաւի, այս հարուածներ թափառական և անտուն հայերուն ոչ միայն այս երկրին մէջ, այլ այն ազատ երկիրներու մէջ, ուր հայերու իրաւանց և վերջին ազէտներու վրայ ժողովրդոց ուշադրութիւն է գրավված։

Կան ուրիշ շատ պատճառներ, որ չեն կրնար գրուել հոս, թերևս ներելի ըլլայ ըսել մեծ պատճառներէն մին ալ յանուն ազգասիրական ձգտումներու հիմնուած ընկերակցութեանց և գրողներու կողմէն գրուած է, որոց ուսումնասիրութիւն և նկարագրութիւն այնքան արիւնոտ էջեր կը լեցունեն հայկական պատմութեան մէջ, որքան Սասունի և Տրապիզոնի կոտորածներ։ Լաւ է, ուրեմն, որ կանգ առնենք հոս։

Այսպէս կը գոցուի «Armenian Home», իր տարի մը և երկու ամսուան գոյութեան մէջ երեք հարիւր հայերու օգնելով ըստ պարագային, առաջնորդելով զանոնք ուրիշ յարմար երկիրներ կամ գործ գտնելով Անգլիոյ մէջ, կը գոցուի յանձնելով իր վերջին տան և հինգ որբեր «Church Army»-ին *), ուր այս վերջինք պիտի երթան աշխատել հաղիւ միայն ապրելու համար։

Զարմայր

*) „Church Army“ պիտի չը շփոթել „Salvation Army“-ի հետ. այդ ազգանունը բնդհանուր աշխատութեան յարկ մ'է, որ կը խնամուի Անգլիական Եկեղեցիէն։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԱՆԳԼԻԱՅԻՑ

—

Լոնդոն, յունիսի 23 ին

Թերևս ալ հարկ չը պիտի մնայ գրել հայ գաղթականներու վրայ, քանի որ «Armenian Home»—հայերու ապաստարանը պիտի գոցուի իսպառ յուլիսի սկսեալ։

«Armenian Home» իբր տարի մը պահեց իր գոյութիւն։ Իր հիմնարկութեան և պահպանման պայմաններուն վրայ փոքր ինչ տեղեկութիւն տրուած էր մի քանի ամիսներ առաջ «Մշակի» բանասիրականին մէջ. հաւանական է որ ընթերցողներ հակասութիւն գտնեն այդ և ներկայ թղթակցութեանց մէջ, սակայն կը խոստովանիմ թէ հակասութիւն իմ և չատերու գաղտնութեան սխալման մէջ էր։

«Salvation Army» իր դռները գոցեց հայերու առջև. հայերու համոզում կամ կարծիք այն է թէ առաջ «Salvation Army» յանուն հայերու կրնար շահել, սակայն այսօր չը կրնար շահել, հետևաբար իր դռներ գոց են հայերու։ Երեք ընտանիք որ մասամբ կը խնամուէին Լոնդոնի արևելեան աղքատ թաղերէն միայն մէջ, այժմ առկախ ձգուած են, և այդ ընտանեաց մին եգիպտոս ղրկուած է բանակին ծախքով։ Այսչափ «Salvation Army»-ի վրայ։ Գանք այժմ ապաստարանի խնդրոյն, որուն փակումը միշտ աղտ մը պիտի լինի հայերու անուան։ Ապաստարանի խնամակալ մասնախումբի հայ անդամներու տեսութիւնն է, զոր կը հաղորդեմ ասուէն, ուղիղ և անաչառ դատողութիւն մը, որուն ճշմարտութեան համոզումը կը ճմլէ ամեն զգայուն հայու սիրտը։

Ապաստարանի փակման պատճառներ բոլորովին բարոյական են։ Թիւրքիայէ, Ֆրանսայէ և Ամերիկայէ խուժող հայերու ամանց համար աշխատուած է գործ գտնել, թէև համեմատաբար քիչեր գոհացուցիչ գործեր ունեցած են։ Այն երիտասարդներ, որ ոչ լեղու գիտեն և ոչ ալ արհեստ ունին, զիջած չեն խոնարհ գործերու և երկար ժամանակ տան մէջ մնալով և ապատամբելով՝ վիրաւորած են խնամակալութիւնը։ Առաջին քայլն և պատճառն է այս, որ մասամբ մը կրնայ արդարանալ թերևս, երբ գաղթականներու պարագաներ նկատեմք։

Մեր երիտասարդներուն մէջ երևցած են աններելի մոլութիւններ, որ ստուգելով ցաւցուցած են այդ տան համակրողներու սիրտը։ Քանզի երիտասարդներ գտնուած են, որ ապաստարանի մէջ ընակելով հանդերձ գիշերներ անցուցած են աղտոտ և ցած ընակարաններու մէջ և կիրքի ու մոլութեանց յանձնուելով՝ վարակիչ ախտեր ստացեր են և, բանէ, արտաւորեր են իրենց գարունաղարդ երիտասարդութեան ապիտակ պատմուճան։

Երրորդ պատճառը գրական սքանդալ մ'է, որ երբէք չը կրնար արդարանալ։ Իսկ չորրորդ գլխաւոր գայթակղութեան առիթ տուել է վեր. Կարապետ Գրիգորեան, ապաստարանի հիմնարկութեան գաղափարը ծնանող, նրա անօրէնը, այսինքն նա, որ իր ուսումը Ամերիկայի աստուածաբանական ճեմարանների միոյն մէջ առնելով և Եղղպտի մէջ մի քանի տարի հովուութիւն ընելով, ամուսնանալով, երկու աղջիկ զաւակներ ունենալով հանդերձ, զիջած է մի աններելի սրբապղծութեան, ապօրինի յարաբերութիւն ունենալով օտարուհոյ մը հետ և ապօրինի զաւակ ունենալով։ Ի՞նչ աններելի սքանդալ. այսօր հայերու ապաստարանի վերայ քիչ շատ գաղափար ունեցող մարդիկ գիտեն այս ամեն և հայեր այլ ևս չեն կրնար կենալ, համակրութեան արժանի լինել։ Ի՞նչ օգուտ, եթէ հայերու բարեկամաց միջազգային ընկերութիւն Անգլիոյ մէջ բանախօսութիւններ տայ և մարած համակրութիւնը զարթուցանել ջանայ, քանի որ բարոյական ազդեցութիւնք և վատ համբաւ կը ապանեն ժողովրդեան զգացումներ և համարում։ Լաւ է որ այս տեսակ Քրիստոսի ապակերներ, կրօնասիրութեան դիմակին տակ մոլի և անճնահաճոյ մարդիկ, հեռանան յանուն ազգի

վարութեան դեռ յայտնի չէ Բ. Դրան վերջնական կարծիքը Կ. Պոլսում այժմ քննվող խնդիրների մասին։ Մեզ յայտնի են հինգ մեծ պետութիւնների կարծիքները այդ խնդիրների մասին և նրանք միանգամայն համերաշխ և համաձայն են միմեանց հետ, բայց այնու ամենայնիւ մենք մինչև այսօր չենք մօտեցել խնդրի լուծման։ Արդեօք կը մօտենա՞նք.—այդ պատկանում է աւելի զուշակութիւնների, քան քաղաքական նկատումների շրջանին։ "Ուրեմն, այն յոյսը և համոզմունքը, որ արտայայտում են շատերը, թէ շուտով հաշտութիւն կը կայանայ—պէտք է համարել լոկ զուշակութիւն...

Եւ կատարեալ միամտութիւն է կարծել, թէ Թիւրքան այնպէս շուտ կը զիջանի, իսկ եւրոպական դիպլոմատիայի արտայայտած զարմանքը Թիւրքիայի յամառութեան վերաբերմամբ պէտք է համարել անհետեւողականութեան և կուրութեան հետեւանք։ Մի փոքր առաջ այդ դիպլոմատիայի և եւրոպական մամուլի մի մասը համարում էր Թիւրքիայի պատերազմական յաղթութիւնը իբրև Եւրոպայի և ընդհանուր խաղաղութեան շահերի յաղթանակ։ Իսկ այժմ, երբ Թիւրքիան, եւրոպական դիպլոմատիայի հաւանութեամբ և համակրութեամբ զինված, ջարդեց Յունաստանը, գրաւեց Թեսալիան, ի՞նչ զարմանալու բան կայ, որ նա չէ կամենում այլ ևս վերադարձնել երկիրը և կամենում է վայելել իր յաղթութեան պտուղները։ Կա՞յ արդեօք այդտեղ հետևողականութիւն, կա՞յ առողջ դատողութիւն։ „Այժմ այլ ևս շատ ուշ է—ասում է ռուսաց մամուլի լուրջ օրգաններից մէկը—մատնացոյց անել Եւրոպայի կամքի և միջազգային դաշնագիրների վրա, երբ արդէն թոյլատրվել է Թեսալիայի գրաւումը Թիւրքայ զօրքերով։ Թիւրքերի կողմն է „երջանիկ տիրապետութեան" սկզբունքը և միջազգային պատերազմական պրակտիկայի տեսակէտից նրանք անպայման իրաւունք ունեն։ Ինչ վերաբերում է նրան, թէ Եւրոպան կարող է խիստ միջոցներ գործադրել Թիւրքերի դէմ, այդ սեսակ միամտութիւն զարմանալի է։ Ինչպէս մինչև այսօր Եւրոպան չը կարողացաւ միաբանվել նոյն իսկ ամենահամեստ միջոցներ գործադրելու հայերի իրական պաշտպանութեան և կրեատէի վիճակի ապահովութեան համար, նոյնպէս և այժմ նա անկարող կը լինի որ և է միջոցի ձեռնարկել Թեսալիան յետ առնելու համար։ Պէտք էր առաջուց կշռել այդ հետևանքները։

Եւ հէնց Թիւրքիայի յանդգնութիւնը, յամառութիւնը, անպատիժ մնալու գիտակցութիւնը բացատրվում է այն խորին համոզմունքով, թէ Եւրոպայի սպառնալիքները դատարկ փամփուշտներ են։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Պարիզում լոյս տեսաւ Նորերս Ֆրանսերէն լեզուով «Զէյթունն» անունով մի գիրք, որի մէջ նկարագրված են Զէյթունի պաշարումները։ Գրքի իսկական հեղինակն է Զէյթունի հերոսներից մէկը՝ Աղասին, իսկ ֆրանսերէն թարգմանել է Արշակ Չօբանեան։ Նկարագրութիւնը հետաքրքրական է, թարգմանութիւնը աջող։ Զէյթունի վերջին պաշարումը պատմված է օրագրական ձևով, մանրամասն կերպով։

Գրքի մէջ ընթերցողը կը գտնի Զէյթունի պատմութիւնը սկսած առաջին աղօտ տեղեկութիւններից, որ պահպանել է պատմութիւնը մինչև մեր օրերը։ Զէյթունը դարերի ընթացքում կարողացել է պահպանվել իբրև մի կղզիացած ժայռ, որը անկործան դիմացել է մուսուլմանական հոսանքին և որին անծանօթ էին օսմանեան իշխանութեան կարգերը մինչև 1865 թիւը։

Ֆրանսիական դրող Վիկտոր Բերար գրել է մի առաջաբան, որի մէջ նա յանձնարարում է Աղասիի գիրքը եւրոպական պետական մարդկանց, որոնք յաճախ կրկնում են մի աղդեցիկ պետական մարդու խօսքերը. «Ես ճանաչում եմ շատ հայերին, բայց Արմենիա չեմ ճանաչում»։ Զէյթունը անկախութիւն պահպանած փոքրիկ մի երկիր է. ինչպէս այս դարի սկզբումն էին Ջերնօգորիան և Յունաստանը, որոնք աւելի ևս փոքր էին, քան Զէյթունը, բայց յետոյ մեծացան և այսուհետև աւելի ևս կընդարձակվեն, որովհետև Թիւրքերի վերջին յաղթութիւնները ամենևին չեն կանգնեցնի իսլամի անկումը։

Եթէ Զօրանեան իր նորերս հրատարակած «Արմենիա» գրքի մէջ ապացուցանում է, որ հայերը քաղաքակրթող տարր են և խաղաղ կուլտուրայի գործողներ, Աղասին իր գրքի մէջ ցոյց է տալիս, թէ հայերը ունեն և այն յատկութիւնը, որ չեն ընդունում նրանց մէջ, այն է զինուորական բարեմասնութիւններ։ Զէյթունի պաշարումը իբրև հերոսական գործ աչքի ընկնող պատմական մի իրողութիւն է։ Անգլիական «Daily News» լրագրի թղթակիցը համեմատում է այդ պաշարումը Գիբրալտարի, Սարագոսայի, Զենովայի և Պարիզի պաշարումների հետ։ 1895 թի այնանը, հոկտեմբերից մինչև դեկտեմբեր, 5000 հայեր պահպանում էին Զէյթունը, որ պաշարված էր 60,000 Թիւրք զինուորներով։ Զէյթունը մնաց անառիկ և զէնքը վայր դրեց պատուաւոր կերպով, եւրոպական հիւպատոսների միջնորդութեամբ և յայտնի արտօնութիւններ ձեռք բերելով, որոնցից մէկն է քրիստոնեայ կառավարիչ նշանակելը և ապատամբութեան գլխաւորների ազատ հեռանալը Եւրոպա։ Անգլիական «կապոյտ Գիրքը», Ֆրանսիական «Դեղին Գիրքը» և եւրոպական թերթերը արձանագրեցին այդ հերոսական պաշարումը, որի մասին կարելի է կրկնել Պարիզի պաշարման մասին Տրոշիի ասած խօսքերը, թէ «դա հերոսական մի խելագարութիւն» էր։ Եւ նշանաւոր է այն, որ Թիւրքական զօրքը գեղեցիկ կազմակերպված էր և լաւ զինված, իսկ նրանց հրամանատարն էր Թիւրք-յունական ներկայ պատերազմի գործող, Թեսալիան նուաճող Էդհեմ-փաշան։

Բ.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Յունիսի 29-ին

Չար լեզուները շատ բաներ հնարեցին, բայց բարեբաղդաբար դրանցից և ոչ մէկն էլ տեղի չունեցաւ։ Զանազան լուրեր էին գալիս Էջմիածնից։ Ասէկօսները պակաս չէին։ Թեմական դպրոցի համար տեսուչ է նշանակվելու Տ. Վարդապետը, կամ թէ ի նկատի ունեն X վարդապետին և այլն և այլն։ Սակայն այդ բոլորին վերջ տուեց Վեհափառ Կաթողիկոսի կոնդակը, որի մէջ որոշ կերպով ասված է ուսուցչական խմբի կազմութիւնը և թէ տեսչի հարցը թողնված է հոգաբարձութեան։ Վեհափառ Կաթողիկոսի այս կարգադրութիւնը լաւ տպաւորութիւն թողեց, որովհետև Շուշու թեմական դպրոցի այս վերջին երկու տարվայ խայտառակ պատմութիւնը միանգամայն դայրացրեց ժողովրդին։ Երկրորդ անգամ առիթ է ներկայանում համոզվելու, որ մեր հոգևորականութիւնը իր սխալ ուղղութիւնը հասկացել է արդէն և փորձեր է անում թողնել այն ընթացքը, որի վնասակարութիւնը աւելի քան պարզ է։ Սա ուրախալի է, և ցանկալի էր, որ Էջմիածինը ոչ միայն բացառիկ, այլ և ընդհանրապէս բոլոր դէպքերում չը շեղվեր օրինականութիւնից և պահպանող լինէր մեր ժողովրդական ընտրողական ազատ իրաւունքի։

Կաթողիկոսի վերջին կոնդակի տրամադրութիւնն իմանալուց յետոյ մեր նորընտիր հոգաբարձութեան անելիքը շատ որոշ է։ Նա կարող է և իր ցանկացած տեսուչը հրաւիրել ու իր ցանկացած ուսուցիչները բերել, արձակելով անպէտքներին, որոնցից մեր դպրոցը ազատ չէ։ Ուսուցիչների հարցը, պէտք է ասած, այնքան էլ դժուար չէ, բայց տեսչի հարցը, պէտք է խոստովանած, դժուար է։ Հոգաբարձութիւնը արդէն սկսել է իր գործունէութիւնը, և արդէն տեսուչ հրաւիրելու յայտարարութիւն է ուղարկել թերթերին. խնդրատուները գուցէ շատ լինեն, բայց հարցը խիստ ընտրութեան մէջ է։

Ա—Դօ

ՆԱՄԱԿ ՇՈՒԼԱՎԷՐԻՑ

Յուլիսի 1-ին

Կովկասի կառավարչապետ իշխան Գոլիցինի կարգադրութեամբ, Շուլավէր եկած մի աստիճանաւորի տուած պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, որոնք հիմնված էին Բօրչալուի գաւառի թուրք ազգաբնակութեան և տեղիս ժողովրդի կողմից նրան ներկայացրած զանազան բողոքների վրա՝ վերջնականապէս պաշտօնական եղան մեր գաւառապետ իշխան Սումբատով և չափարների գլխաւոր հարիւրապետ Գէորգի Զօչիեվ։

Ներկայումս մեծ սարսափի մէջ է Բօրչալուի ամբողջ գաւառը։ Մարդ երկիւղից չէ կարողանում տանից դուրս գալ և իր այժմեան դաշտային հարկաւոր աշխատանքների ետեից գնալ։ Ամեն մէկը՝ կարծես տեղական թոյլ հանգամանքներից օգտվելով՝ «դաշաղ»-աւազակ է դարձել մեր գլխին։ Աւազակ Հալէյի անունը ամենքին սարսափեցրել է։ Գիշեր ու ցերեկ, հրացանը ուսին, իր «կարիճներով» նա շրջում է ամեն տեղ և շարունակում է իր յանդուգն, սանձարձակ ասպատակութիւնները... Պէտք է նկատել, որ երկար տարիների ընթացքում չէ պատահել դէպք, որ հայերից էլ լինէին «դաշաղներ», իսկ եթէ եղել է բացառութիւն, դա Լոռում Զօփուրի տղերքն էին, որոնք մի ժամանակ լոյս ընկան և բաւական անիրաւութիւններ անելուց յետոյ, անմիջապէս փչացան։ Առհասարակ յայտնի աւազակներ կամ աւազակապետներ թուրքերից են լինում և այն էլ մեծ մասամբ արեան վրիժառութեան պատճառով։ Հալէյի «դաշաղ» դուրս գալը, ինչպէս հաստատ գիտենք, եղել է մի սիրահարութեան անաջող դէպք։ Նա Ղազհաջլու թուրքաբնակ գիւղին է, որ գտնվում է Շուլավէրից մօտ 15 վերստ հեռաւորութեան վրա։ Այստեղ նա սիրահարվում է Մէհտի-աղայի եղբօր աղջկայ վրա և երկար ժամանակ ապրում է նրա հետ սիրային կապերով. բայց ինչպէս է պատահում, հայրը մերժում է Հալէյին, տալով աղջկանը կնութեան մի ուրիշ, նոյն տեղացի թուրք երիտասարդի։ Հարսանիքի օրը Հալէյին իր հինգ ընկերներով միասին յանկարծ շրջապատում են աղջկայ հօր տունը և հրացանաձգութեամբ սպանում Մէհտի-աղայի որդիներից մէկին։ Ահա այդ դէպքից անցել է գրեթէ մի տարի, «դաշաղ» է հրատարակվել Հալէյին իր ընկերներով։

Կառավարութեան հրամանով, չափարները շատ են հետամուտ եղել, որ ձերբակալեն նրան, բայց չէ աջողվել։ Հալէյի նպատակը ոչ թէ կենդանիներ յափշտակելը և մարդկանց ալանթալան անելն է, այլ այն, որ նա աշխատում է բնաջինջ անել Մէհտի-աղայի ցեղը, որ եղել է նրա դաշաղութեան, կամ ճիշդը՝ դժբաղդութեան պատճառը։ Մի առժամանակ Հալէյին կորած մնաց, չերևաց մեր կողմերում, իսկ սրանից մի քանի ամիս առաջ Ղազհաջլուի ճանապարհին, Խրամ գետի մօտ, հանդիպում է Մէհտի-աղային, իր երկու որդու հետ, որոնք Շուլավէրից տուն էին վերադառնում։ Խսկոյն հրացանի է բռնում օրը ցերեկով՝ կամենալով երեքին էլ մէկտեղ սպանել։ Մէհտի աղան և մէկ որդին պաշտպանողական դիրք են բռնում փորած խրամատների մէջ, այնպէս որ արձակված զընդակները թռչում անցնում էին ապարդիւն՝ նրանց գլխի վրայով, առանց դիպչելու, իսկ միւս որդին ընկնում է անհաւասար կռուի մէջ և մեռնում։ Հալէյին կարող էր սպանել և միւսներին էլ, եթէ Թիֆլիսից վերադարձող Շուլավէրի դիլիժանները օգնութեան չը հասնէին... Ինչպէս հաստատ տեղեկացայ, Հալէյին սարի ճանապարհին նորերս Մէհտի-աղայի քրոջ որդուն սպանել է, միայն կանանց և երեխաներին թողնելով անվնաս։ Մէհտի-աղայի ազգականները երկիւղից չեն կարողանում այս ամառը, ըստ սովորութեան, սար գնալ։ Նրանցից մի քանիսը չափարների հսկողութեամբ «եայլաղ» դուրս եկան։ Հալէյին դեռ արանումն է. իր մի քանի դիտաւորութիւնները կատարելուց յետոյ՝ նա շուտով կը բարձրանայ սարը, ուր կը շարունակէ իր չահատակութիւնը։ Համեմատելով նախընթաց տարիների հետ, այս տարի սարաւորների «քօչը» քչացել է և դա այն յայտնի պատճառով, որ եայլաղներում գողութիւնները շարունակվում են։

Այս բանի վրա հարկաւոր է խիստ ուշադրութիւն դարձնել։ Այս տարի «եայլաղներում» ցանկալի է, որ կարգին թուով շատ ոստիկաններ նշանակվեն. եղածները, մեր կարծիքով, շատ քիչ են։

Գ. Բալասեանց

ՆԱՄԱԿ ՄԵՂՐԻՑ

Յունիսի 20-ին

Մեր գիւղացիների անտեսական դրութիւնը յուսահատական է։ Միանգամայն անհնարաստ, բարդ և անհնարամատ պայմանների մէջ են գտնվում գիւղացիները։ Մի կողմից ընութեան պատահարները գարնան՝ փչացրին գիւղացու թանգագին բամբակի արտերը և միւս կողմից, նրա միւս յոյսն էլ՝ բոժոժը անաջող քերը տուեց։ Ամբողջ ամիս մանր և մաշիչ գիշերքական աշխատանք էին գործ դնում, տենդային ոգևորութեամբ էին կերակրում, պահում, պահպանում որդերին, որպէս զի լաւ բոժոժ քաղեն, բայց ինչ... իրականութեան մէջ դրա տխուր հակապատկերը ներկայացաւ։ Եւ ոմանք չնորհիւ.—մի ինչ որ բաղդախնդիր յոյն անձնաւորութեան։ Դա առագին քանակութեամբ սերմ էր բերել և բաժանել. երրորդ, չորրորդ քնի մէջ որդերը ըսկսեցին կոտորվել, այնպէս որ 7—10—25 պուդ բոժոժ քաղողը հազիւ 2—3 պուդ քաղեց։ Վընասը մեծ է։

Թող մեր հասարակութիւնը սերմ ընտրելիս զգոյշ լինի և անցեալի ու ներկայի դառն փորձերից խրատվի։ Այդպիսի խաբեբայ անձանց բաւական չէ հեռացնել, այլ և քրէական գործ պէտք է սկսել դրանց դէմ, ինչպէս սկսել են մի քանի գիւղացիներ սերմ բաժանող երկու մարդկանց դէմ։ Դրանցից մէկին ձերբակալել է քննիչը։

Տգեղ երևոյթներից մէկն էլ մեր երկու-երեք վաճառականների մէջ գոյութիւն ունեցող մրցութիւնն է։ Փող դիզելու, փող աշխատելու տենչանքով դրանք մեծ վնասներ են տալիս հասարակութեան։ Մէկը, տեսնում էք, աշխատում է էժան գնով, արհեստական միջոցներով ցածրացնել բոժոժի գինը և «նաղդ» փողով վերցնել, իսկ միւս երկու վաճառականներն էլ աւելի թանգացնում են, իրանց սեփական չահերի համար։ Այդ վերջինները վերցնում են համեմատաբար թէև թանգ գընով, բայց «նիսիա» և փոքի փոխարէն չատերին տալիս են չլացուցիչ չորի կտորներ և մանր մանր իրեր։ Այդպիսով, ընդհանրապէս, գիւղացու վիճակը դառնում է աւելի կրիտիկական։ Հարկաւոր է մտածել և հեռացնել այդ ագեղ սովորութիւնը և բոժոժի վաճառումը լայն և բացիսնալ պայմանների մէջ դնել։ Այս տարի թանգ էր բոժոժը և 14 ր. աւելի չը բարձրացաւ նրա գինը։

Միակ յոյսը մնում է խաղողը. մեր այգիները այս տարի ազատ են «օիդիում» (թող) կոչված հիւանդութիւնից, չնորհիւ հասարակութեան նախաձեռնութեամբ բերել տուած ծծումբի։ Ծծումբը փչել են և ազդեցութիւնը բարերար է։ Միայն երէկ տեղացած կարկուտը մի փոքր վնաս հասցրեց, բայց և այնպէս խաղողը առատ է։

Ի դէպ։ Պ. Մուսինեանի «Մշակի» մէջ տպված գիւղատնտեսական զրոյցները մեր այգեպանները ուրախութեամբ և հետաքրքրութեամբ էին կարդում և լսում։ Ցանկալի է, որ յաճախ լոյս տեսնեն «Մշակ» լրագրի մէջ այդպիսի զրոյցներ, որոնք կը պարզեն մեր գիւղատնտեսութեան վերաբերեալ մութ խնդիրները։

Մեր գիւղական նոր տանուտէրը աւերակների վրա է թագաւորում։ Ոչ մի գործունէութիւն և ոչ մի նախաձեռնութիւն հասարակական գործերի մէջ։ Դրա անսահման թուլութեան չնորհիւ հասարակութեան մէջ կռիւները, անբարոյական հայհոյանքները լայն չափեր են ստացել։ Գիւղացիների գանգատներին անտարբեր է վերաբերվում և համարեա ամենևին ուշադրութիւն անգամ չէ դարձնում։ Ամարանոց տանող անտանելի ճանապարհների և ջրանցքների վրա կամուրջների բացակայութիւնը ահագին դժուարութիւններ է պատճառում։ Գիւղը անմաքրութեան և հակառողջական պայմանների մէջ է և չը նայած, որ տեղական սանիտարը դիմումներ է անում, բայց ո՞վ է լսում։

***

ՆԱՄԱԿ ԲԱԼԱԽԱՆԻՑ

Յուլիսի 1-ին

Բալախանին, իբրև արդիւնաբերութեան մի հարուստ հանք, ուր գործելու համար հազարաւոր աշխատող ձեռքերի անհրաժեշտութիւն է զգացվում, ներկայացնում է բանւորական մի

մեծ կեանք, բանուորների մի խոշոր գումար, մի խառնիճաղանճ հաւաքածու, կեանքի անտանելի և անկանոն պայմաններով։

Մինչև այժմ չատ թղթակցութիւններ գրվեցին բանուորական ներկայ թշուառ դրութեան ու նրանց վերաբերեալ այլ և այլ հարցերի, ինչպէս և Բալախանիի հիւանդանոցի մասին. ամենք էլ հրապարակ հանեցին մի քանի օրինակներ, աւելի պարզ ցոյց տալու, թէ ինչպէս են վարվում համալսարանական կառավարիչները իրանց ստորադրեալների հետ. մի ուրիշն էլ չատպեց յայտնել, որ Բալախանիում անհրաժեշտ է ունենալ մի գրադարան, ուր յոգնած բանուորը կարող կը լինի մտաւոր յագեցումն ստանալ իր ծանր աշխատանքից յետոյ։ Սակայն բանուորը ֆիզիքական ծանր աշխատանքից յետոյ հանդստանալու նոյն իսկ մի որոշ անկիւն չունի, կամ թէ, հանդստանում է մի այնպիսի օթեւանում, որը ներկայացնում է մի նեղլիկ, ցածր ու խոնաւ սենեակ, աննախանձելի մաքրութեամբ, ողորմելի դրութեան մէջ, զուրկ ամենակարոր յարմարութիւններից և որի մէջ բնութեան առատ լոյսը ներս է թափանցում մի նոյնպիսի թշուառ պատուհանով, որի մեծութիւնը որոշելու համար,—եթէ մի փոքր էլ չափազանցնենք,—աւելի աջող կը լինի կրկնել վիպասանի խօսքերը, թէ՝ հազիւ մի կատու կարող է անցնել։ Իսկ այս տեսակ սենեակների նեխված ու ապականված օդում ցնչում և ապրում են 4, երբեմն էլ 6 կենդանի էակներ...

Աւելցնենք և այն, որ այս բնակարան կոչված որջերը չեն կազմում մի առանձին թաղ, կամ չեն շինված յարմար ու առանձնակի տեղերում, այլ կառուցված են նոյն իսկ նաւթահորերին կից, նրանց հետ խառն։ Հէնց այդ պատճառով բնակարանները այստեղ ներկայացնում են կեղտոտութեան մի մի չատեմարան, ամեն տեսակ անմաքրութիւնների հաւաքածու, որոնց մաքրելն այնքան էլ հեշտ չէ ներկայ պայմաններում։ Շատպենք սրանց վրա աւելացնել և այն, որ նաւթի արտադրած բոլոր կեղտոտութիւնները ու մնացորդը հաւաքվում, չատ անգամ լճանում են նոյն իսկ բագերում, որը և, մանաւանդ հեղուկ մասը, գոլորշիանալուց յետոյ, տարածում է խիստ զզուելի դարչահոտութիւն...

Իսկ արտաքնոցները, բնակարանների նման, չինված են բակերում, բոլորովին անխնամ դրութեան մէջ են թողնված, զուրկ կեղտանցքներից և դատարկվում են հազիւ մի քանի ամիս մի անգամ, այն էլ օրը ցերեկով, առանց որ և է դեզինֆեկցիայի։ Այն ինչ ամիսների ընթացքում ամբարված կեղտոտութիւններից, մանաւանդ արևի ամառվայ կիզիչ ճառագայթների տակ, բուրում է այնպիսի դարչահոտութիւն, որպիսին Ասիայի կեղտոտ խորքերումն անգամ ցուցէ չը լինի։

Ահա ինչ պայմանների մէջ է ապրում Բալախանիում աշխատող դասը։ Երբ բանուորը կունենայ փոքր ինչ օրինաւոր բնակարան, այն ժամանակ միայն հրապարակ կարող են գալ մի շարք կենսական խնդիրներ, այն ժամանակ անյուշ կարելի է անհրաժեշտ համարել գրադարան ունենալը, որի հետ գուցէ աջողութեամբ կը կապվեն և մի քանի ուրիշ խնդիրներ...

Յ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, յուլիսի 1-ին

Բարոյական պարտք եմ համարում հրապարակ հանել մի նոր փաստ, որ ցոյց է տալիս, թէ ինչպէս են մեր քահանաները կատարում իրանց պարտականութիւնը։

Յունիսի 26-ին հիւանդանոցում, երկար հիւանդութիւնից յետոյ, վախճանվեց մի արհեստաւոր երիտասարդ։ 27-ին հոգեհանգստին և 28-ին թաղման հրաւիրված էր, ի միջի այլոց, և հիւանդանոցի քահանայ Արսէն քահանայ Բագրատունի։ Բայց վերջինս, չը բարեհաճելով չնորհ ընդունել ոչ հոգեհանգստեան և ոչ թաղման, այնու ամենայնիւ, պատուիրել էր ստանալ իր վարձը։ Ես հաստատ աղբիւրներից իմացայ, որ քահանայ Բագրատունին, որը ժամի 9-ին հրաւիրված էր յուղարկաւորութեան, բոլորովին ազատ էր։ Ցանը նստել և վարձ պահանջել,—այս է յիշեալ քահանայի վարմունքը։ Բացատրութիւնները աւելորդ են։

Ն. Աբրահամեան

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» այս համարը բաղկացած է 6 երեսից։

Յուլիսի 2-ին Վիլնա քաղաքում վախճանվեց հայազգի գեներալ-լեյտենանտ Դիմիտրի Բոդդանիչ Տէր-Ասատուրով։ Հանգուցեալը պատկանում է կովկասեան զորքի փառաւոր վետերանների շարքին և յայտնի է Դաղստանում կատարած իր քաջագործութիւններով այդ երկրի ապստամբութեան ժամանակ, 1877 թվին։ Երկար ժամանակ Կովկասում ծառայելուց յետոյ, նա նշանակվեց Կիէվի զինուորական շրջանի հեծելազնդի հրամանատար, ապա փոխադրվեց Վարշավա և Վիլնա։ Հանգուցեալի ազգականները մտադիր են մարմինը փոխադրել Թիֆլիս և թաղել Վանքի եկեղեցու դաւթում, միւս հայ զօրապետների կողքին։

—

Մենք ստիպված ենք նորից հրաւիրել հոգևոր իշխանութեան լուրջ ուշադրութիւնը այն աննրելի կարգերի վրա, որոնք տիրում են Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցում։ Բանից դուրս է գալիս, որ այդ հիւանդանոցի հայ քահանան և ստրկաւաղը թոյլ են տալիս, որ հիւանդանոցում մեռնող աղքատ, թշուառ հիւանդներին թաղեն առանց քահանայի և առանց օրինակատարութեան գերեզմանի վրա։ Երբ մեռնողը աղքատ է, քահանան կարգը կատարում է հիւանդանոցում, և դիակը յանձնում հիւանդանոցի ծառաներին, որոնք տանում թաղում են հիւանդանոցի ընդհանուր գերեզմանատանը։ Մի քանի օր առաջ հիւանդանոցում վախճանվում է մի խեղճ գաղթական, բիթլիսցի Սիմէոն Յովհաննիսեան։ Չը նայելով որ սարկաւագը չատ լաւ գիտէր, թէ պէտք է իմաց տալ հայոց Բարեգործական ընկերութեան գրասենեակին, թէ խեղճ գաղթականը ընտանիք ունի Թիֆլիսում, նա յայտնում է հիւանդանոցի վարչութեան, որ գաղթականը տէր տիրական չունի։ Քահանան չէ գնում թաղելու, որովհետև աղքատ է մեռնողը և դիակը յանձնվում է հողին ծառաների ձեռքով, այնպէս որ մինչև անգամ յայտնի չէ գերեզմանի տեղը, որպէս զի թշուառի զաւակները գոնէ կարողանան գնալ արտասվել իրանց հօր գերեզմանի վրա։ «Մեր հայրը մեռաւ, լացում են այդ զաւակները, առանց մեղ տեսնելու. այդ վիշտը մի կերպ կը տանենք, բայց որ նա թաղվեց «չ քրիստոնէաբար, այդ կսկիծը երբէք մոռանալ չենք կարող»։ Ե՞րբ մեր հոգևոր հայրերը պէտք է մի քիչ բարեխղճութիւն ունենան։

—

Կ. Պոլսի «Բիւզանդիոն» թերթի մէջ տպված է Թիւրքաց կառավարութեան ընդարձակ պաշտօնական տեղեկագիրը Անատոլիայի մէջ բէֆօրմներ մտցնելու մասին «վեցեակ նահանգաց բարենորոգմունք» վերնագրով։ Այդ տեղեկագրի համառօտ բովանդակութեան հետ անցեալ անգամ մենք ծանօթացրինք մեր ընթերցողներին և աւելորդ ենք համարում արտատպելը, քանի որ այդ տեսակ պաշտօնական խարդավված ծանուցումներ շարունակ տպվում են Կ. Պոլսի լրագիրների մէջ, առանց որ գործերի վիճակը Փոքր-Ասիայում մի մազաչափ անգամ փոխվի...

—

Ինչպէս երևում է, վաղաժամ էին այն լուրերը, թէ ժանտախտը վերջացել է և այլ ևս երկիւղ չը կայ նրա տարածվելու մասին։ Լոնդոնի լրագիրներին հաղորդում են Սոֆիայից, որ ժանտախտը երևացել է Կ. Պոլսում և բոլգարական կառավարութիւնը արդէն կարանտին է հաստատել Թիւրքայից եկող բոլոր ուղևորների համար։ Այդ լուրը պէտք է նոր եռանդ ներշնչի մեր քաղաքային վարչութիւններին ժանտախտի դէմ մաքառելու համար ծրագրված միջոցները անթերի գործադրելու։

—

Մենք ստացանք Վիէննայի Մխիթարեան տպարանի մի նոր հրատարակութիւնը—«Պատկերազարդ բնական պատմութիւն», հեղինակութիւն հ. Գաբրիել վ. Մէնէվիշեանի։ Առ այժմ հրատարակվել են երկու հատորներ. 1) «Կենդանաբանութիւն» 364 մեծադիր երես, 480 պատկերներով և 2) «Բուսաբանութիւն» (344 երես, 373 պատկերներով)։ Երրորդ հատորը—«Հանքաբանութիւն»—տպվում է և լոյս կը տեսնի յուլիսի վերջում։ Տպագրութիւնը, ինչպէս յատուկ է Վիէննայի տպարանին, չատ գեղեցիկ է, պատկերները չքեղ են։ Իւրաքանչիւր հատոր (կազմած) արժէ 1 ռուբլի 85 կոպէկ, առանց ճանապարհածախսի։ Ի նկատի ունենալով, որ մինչև այժմ մեր մէջ հրատարակվել են բնական պատմութեան վերաբերեալ միայն համառօտ գրքեր, հ. Մէնէվիշեանի այս ընդարձակ գործը առանձին ուշադրութիւն է գրաւում։ Այս աշխատութեան մասին մենք մանրամասն կը խօսենք մի այլ անգամ։

—

Կառավարութիւնը, ցանկանալով Սև ծովի ափին հիմնել բուժարաններ հիւանդների համար, ուղարկել է մի քանի պրոֆէսօրներ բուժարանի համար յարմար տեղ ընտրելու։ Պրոֆեսօրները իրանց տեսած տեղերից ամենից նպատակայարմարն են համարել Սոչին։

—

Մեր երկիրը մեծ յարմարութիւն ունի դեղօրայքի համար գործածվող բոյսեր աճեցնելու։ Աչքի առաջ ունենալով այդ հանգամանքը, մտադրութիւն կայ փորձեր անել զանազան տեղերում ցանելու և մշակելու այդ բոյսերը։ Երկրագործութեան մինիստրութիւնը որոշել է մեծ ծաւալով փորձ սկսել Սոչիի փորձնական կայարանում։

—

Կարսի նահանգի Օլթիի շրջանում, Թիարբինքեօ գիւղի մօտ, Սիմէոնիդի անունով մի պարոն գտել է պղնձի առատ հանք։

—

Ղուբայի գաւառը, որ ունի գիւղատնտեսութեան և յատկապէս այգեգործութեան համար մեծ յարմարութիւններ, չուտով կունենայ այգեգործական դպրոց։ Երկրագործութեան մինիստրութիւնը մտադիր է դպրոցը բանալ ներկայ 1897 թվի աշնանը։

—

Ռուսաց սինոդի քննութեան առարկայ է դարձել Ստավրօպոլի և Կուբանի նահանգների այլազգիների համար դպրոցներ հաստատելու խնդիրը։ Մտադրութիւն կայ առանձին տիպի դպրոցներ հիմնել յատկապէս այլազգիների համար։

—

Թէյի մշակութեան գործը գիտնականապէս ուսումնասիրելու համար ուղարկված են Պետերբուրգից Կովկաս մի քանի ընդէտներ։ Ուդելը և Կ. Պոպով մեծ քանակութեամբ և մեծ տարածութեան վրա մշակում են այդ թանգագին բոյսը։ Այս տարի Կ. Պոպով Զինաստանից բերել է տուել 700 պուդ թէյի սերմ և դարձեալ մի քանի չինացի ընտանիք այդ բոյսի մշակութեամբ պարապելու համար։ Չինացիներից 15 տղամարդ են, 9 կին և 4 երեխայ։

—

Պետերբուրգի «Міръ. Отголоски» առաջադէմ թերթը, խօսելով մամուլի նշանակութեան և դերի մասին, հետևեալ կարծիքն է յայտնում. «Եթէ լրագիրը կամ ամսագիրը իրանց նպատակ են դրել չիտակ կերպով ծառայել հայրենի երկրին, չը նենգել, միայն նիւթական շահի ետևից չընկնել, հայթայթել ընթերցողներին առողջ, թարմ, լաւ պատրաստված մտաւոր սնունդ, ազատ որ և է կեղծիքից, այդպիսի օրգանների ազդեցութիւնը բարերար կը լինի, և նրանց գործունէութիւնը՝ քաղաքակրթիչ։ Կաթիլ առ կաթիլ, համար առ համար նրանք կը ծակեն տգիտութեան և նախապաշարումների կեղևը և ամեն օր կը մտցնեն սովորական կեանքի խաւարի մէջ դիտութեան և քննադատութեան լոյսը»։ Ապա խօսելով այն մասին, որ միշտ այդպէս չէ լինում և չատ անգամ լրագիրները թարմ, առողջ սնունդի փոխարէն առաջարկում են իրանց ընթերցողներին կեղծված, խարդավված մտաւոր կերակուր, լրագիրը, իբրև օրինակ այդպիսի խարդավված սնունդի, առաջ է բերում «Новое Время» լրագրի հրատարակիչ Սուվորինի հրապարակախօսական գործունէութիւնը։ «Մինչև այսօր, ասում է լրագիրը, Սուվորինը առաջարկել է «Новое Время» անուն կրող իր վիներգիայից 7662 անգամ. այդպիսի մի լաւ, թափվելով կաթիլ կաթիլ, պեղում է արդէն սկզբունքների, համոզմունքների պինդ հիմքը։ Այդպիսի լրագրութիւնը նոյնպէս ոյժ է, բայց խաւար, կործանող ոյժ։ Զուրը ողողում է հողը, թարմացնում է ամեն բան, կեանք է ներշնչում, չարժում է նաւերը, ջրաղացները, բայց մի և նոյն ջուրը, սանձարձակ, քանդում է պատուարները, հեղեղում է գիւղերը և արտերը, քանդում է մարդկանց տունը ու փչացնում է նրանց գոյքը։» Աւելի լաւ բնորոշել Սուվորինի գործունէութիւնը անկարելի էր։

—

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 2-ին, խճուղուց մի քառորդ վերստ դէպի անտառը, ոստիկանութիւնը գտաւ հինգ օրից ի վեր անհետացած մի ռուս անտառապահի դիակը։ Սպանութիւնը կատարվել է, ինչպէս ենթադրում են, միայն կողոպտելու նպատակով. տարել են հրացանը և ատրճանակը։ Աշխատում են գտնել սպանողներին. տեսնենք։—Այստեղ է և նոր գաւառապետ իշխան Մաղալով իր օգնականով և կառավարչական ատեանով։ Այստեղ է և հաշտարար դատաւորը։ Նոր պրիստավի մասին առայժմ ոչինչ չենք կարող գրել։—Հայ սիրողները պատրաստվում են մի ներկայացում տալ, «Ակամայ բժիշկ» կոմէդիան, գաղթականների օգտին։ Ամարանոց եկողների թիւը չատ է. կենդանութիւն է տիրում ամեն տեղ. եղանակը չատ ղով է։ Ոչխարի մսի գինն է 6 կոպէկ ֆ., իսկ տաւարինը 5 կոպէկ. հացը 2 և 3 կոպէկ։ Հունձը դեռ չէ սկսվել. արտերը միջակ են»։

—

ՋԱԼԱԼ-ՕՂԼԻԻՑ մեզ գրում են. «Յունիսի 29-ին մի խումբ երիտասարդներ մի ներկայացում տուին գաղթականների օգտին, որից զուտ արդիւնք մնաց 47 ռուբլի»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Անգլիական համայնքների ժողովի յուլիսի 5-ի նիստում տեղի ունեցաւ հետևեալ հարցաքննումը.

Պատգամաւոր Ֆլին հարցրեց արտաքին գործերի քարտուղարից, թէ ինչ արդիւնք ունեցաւ Թօքատի կոտորածի վերաբերմամբ եղած դատավարութիւնը և ինչ պատիժ նշանակվեց յանցաւորների համար։

ԿԸՐԷՕՆ. Թօքատի յանձնաժողովը քննեց 115 բանտարկեալներին, որոնցից 61-ին դատապարտեց. նրանցից տասն և հինգին մահվան պատժի, հինգին, մարդասպանութեան համար՝ 15 տարվայ բանտարկութեան, եօթին, կողոպուտի և նման յանցանքների համար՝ 10 տարվայ բանտարկութեան, իսկ միւսներին, կոտորածների միջոցին կատարած զանազան յանցանքների համար՝ համեմատաբար աւելի կարճատև բանտարկութեան։ Մահվան դատավճիռները հաստատված են Կ. Պոլսի մինիստրական խորհրդից բայց դեռ չեն հաստատվել սուլթանի կողմից։ Ես կարծում եմ, որ բանտարկութեան դատապարտվածները արդէն գտնվում են այժմ բանտերում։

—

Վերջերս սկսել էին լուրեր պտտել, որ Կ. Պոլսի ռուսաց դեսպան Նելիդով տեղափոխվում է պաշտօնով Հռոմ։ Արևելեան հարցի այժմեան վիճակում, երբ այդ հարցը չարժող լծակներից մէկը համարվում է Նելիդով, մանաւանդ դեռ չը լուծված հայոց հարցի մէջ նրա բռնած հաստատ և որոշ դիրքը, ենթադրել էին տալիս, որ այդ լուրը սխալ է։ Սակայն Պետերբուրգից և Կ. Պոլսից եւրոպական հեռագրական գործակալութիւններին ուղարկված հեռագիրները հաստատում են այդ լուրի ճշդութիւնը։ Ահա ինչ է հեռագրված Պետերբուրգից Վիէննայի կիսապաշտօնական «Pol. Corresp. լրագրին.

«Պ. Նելիդովին Հռոմի դեսպան նշանակելը բացատրվում է գլխաւորապէս նրա սեփական ցանկութեամբ։ Դեսպանը վաղուց ձգտում էր նոր տեղ ստանալ։ Նրա հեռանալը Կ. Պոլսից ոչ մի փոփոխութիւն և նորութիւն առաջ չի բերի ռուսաց քաղաքականութեան մէջ Թիւրքիայի վերաբերմամբ»։

Նելիդովին իբրև յաջորդ համարում են Զինովիէվին, ռուսաց այժմեան դեսպանին Շվէդիայում։ Նա համարվում է հմուտ և փորձված՝ արևելեան քաղաքականութեան մէջ, որովհետև երկար ժամանակ եղել է Թեհրանում ռուսաց դեսպան, ապա վարել է ասիական դեպարտամենտի գլխաւորի պաշտօնը։ Զինովիէվ համար-

վում է առհասարակ հայասէր, և Պարսկաստանում գտնված ժամանակ նա միշտ համակրանքով է վերաբերվել հայերին և հովանաւորել նրանց։ Նա գիտէ խօսել և հայերէն։

ԹԻՒՐԲԻԱ ԵՒ ԹԷՍԱԼԻԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Արտաքսմանեան լրագիրների վերջին տեղեկութիւնները բաւական յուզիչ կերպով են նկարագրում գործերի դրութիւնը Կ. Պոլսում։ Նախ և առաջ հերքվում են թիւրքաց աղբիւրներից ճարպիկ կերպով տարածված այն լուրերը, որ իբր թէ Իլդիզ-Քիոսկում և Բ. Դրան մէջ զանազան հոսանքներ են տիրում։ Սուլթանը, Բ. Դուռը և մինիստրները կատարելապէս համաձայն են գործում և մի և նոյն նպատակին են դիմում, այն է օսմանեան կայսրութեանը միացնել եթէ ոչ ամբողջ Թեսալիան, գոնէ դրա մի մասը։ Զարհուրեցրած են այն լուրերը, որ իբր թէ չուտով տեղի է ունենալու մինիստրական փոփոխութիւն։ Տէվֆիկ-փաշան, չատ կարելի է, աշխատում է մեծ վիզիր դառնալ. պատմում են մինչև անգամ, որ իբր թէ նրան օգնում են երկու օտար դեսպաններ, բայց այն ևս յայտնի է, որ այժմեան մեծ վիզիրի դրութիւնը խախուտ չէ։ Կ. Պոլսում ամենքն էլ համոզված են, որ թէ պալատը և թէ Բ. Դուռը ամեն ջանք գործ են դնում ձգձգել բանակցութիւնները, մինչև որ կաջողվի հաչտեցնել Եւրոպան կատարված փաստի հետ։

Մի և նոյն ժամանակ ամեն հնարք գործ են դնում ցոյց տալու, որ իբր թէ սուլթանը և նրա խորհրդատուները ցանկանում են կատարել Եւրոպայի պահանջը, բայց չեն համարձակվում այդպէս վարվել, վախենալով մահմեդականների ընդհանուր ապստամբութիւնից։ Թիւրքաց լրագիրները, որոնք, ինչպէս յայտնի է, ընդհանրապէս մեծ ազատութիւն չեն վայելում, այժմ մեծ եռանդով պահանջում են Թեսալիայի միացումը, դրդռելով մահմեդականների չովինիստական կրքերը։ Կ. Պոլսում և չատ ուրիշ քաղաքներում «միտինգներ» են կազմվում Թեսալիական հարցը քննելու համար։ Այդ ժողովներում, ուր ներկայ են լինում պաշտօնական պաշտօնեաներ, թիւրք վաճառականներ, մոլլաներ, սոֆտաներ և զինուորականներ, խիստ ճառեր են արտասանվում եւրոպական պետութիւնների դէմ և բողոքում են Թեսալիան Յունաստանին վերադարձնելու դէմ։ Ժողովների վերջը սովորաբար դրաւոր բողոքներ են կազմվում և ուղարկվում Իլդիզ-Քիոսկ։ Պալատից կարգադրութիւն եղաւ «այդ մարդկանց ուշադրութիւնը դարձնել իրանց վարմունքի վտանգաւոր բնաւորութեան վրա», բայց, ինչպէս երևում է, այդ ներշնչումները առանձին տպաւորութիւն չը գործեցին «միտինգներ» կազմակերպողների վրա, որովհետև նրանք այժմ աւելի էլ յաճախ են ժողովվում։ Եւ իսկ որ, թիւրք ժողովրդի նոյնանման ցոյցերի մասին հաղորդում են Սալոնիկից, Զմիւռնիայից և չատ ուրիշ քաղաքներից։ Զմիւռնիայում բողոքի մի այդպիսի միտինգի վերջը մի յատուկ մանաժողով կազմվեց «Թեսալիայի եղբայրակիցներին նպաստելու» համար։ Ագիտացիան, ինչպէս երևում է, կատարվում է բուն եւրոպական ձեով, ֆրանսիական և անգլիական նմուշների համեմատ։

Մի և նոյն ժամանակ Թեսալիայից ուղերձներ են ուղարկվում Իլդիզ-Քիոսկ, որոնց մէջ մահմեդականները, կուցօվալախները, հրէաները և մինչև անգամ մի քանի յոյներ աղերսում են փադիշահին երջանկացնել իրանց շրջանի ազգաբնակութիւնը, միացնելով նրան իր պետութեան հետ։ Կ. Պոլսի լրագիրները հաւատացնում են, որ չը նայելով յունական զաղանի կոմիտէների սպառնալիքներին, այդ շարժումը գնալով աւելի մեծ չափեր է ընդունում։ Թեսալիայի թիւրքաց զօրքի հրամանատարը հաղորդում է, թէ Թէսալիայի ազգաբնակութիւնը հիացմունքով է ողջունում թիւրքաց զօրքերին, որպէս ազատարարներին, որովհետև միակ ժառանգութիւնը, որ ստացել է ազգաբնակութիւնը յունաց կառավարութիւնից, այն բազմաթիւ աւազակախմբերն են, որոնք անխնայ կերպով կողոպտում և աւերում են երկիրը։ Թեսալիան ազատելու համար այդ աւազակախմբերից, որոնք գլխաւորապէս բաղկացած են յունական կանոնաւոր և անկանոն զօրքերից, Էդհէմ փաշան ստիպված եղաւ թուրքական զօրաջնդեր կազմակերպել, որոնք անդադար հալածում էին աւազակներին։ Աւազակների մի նշանաւոր մասը գերի բռնվեց և Էդհէմ-փաշան հրամայեց հրացանի բռնել նրանց։

Մենք արդէն հաղորդեցինք, որ թիւրքերը այնպիսի ընթացք են բռնել Թեսալիայում, որ կարծես թէ ամենևին միտք չունեն այնտեղից հեռանալ։ Փաստերը այդ են հաստատում։ Այս օրերս 1000 թիւրք զինուորներ և նոյնքան էլ ալբանացիներ դրաւեցին Կալարակի քաղաքը, որը, յոյների ասելով, չէզոք գծի վրա է գտնվում։ Աթէնքից ստացված հեռագիրները հաւատացնում են, թէ Կալարակիի ազգաբնակութիւնը փախաւ, որից յետոյ թիւրքերը կողոպտեցին և աւերեցին քաղաքը։ Յունական կառավարութիւնը բողոքեց դեսպաններին զինադադարի պայմանների այդպիսի խախտման դէմ և աւստրօ-ունգարական դեսպան Կալիցէ, Կ. Պոլսի դեսպանների կողմից, մի յայտագիր ուղարկեց Բ. Դրան, որով պահանջում է վերջ դնել Թեսալիայում տիրող անտանելի կարգերին։

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

Հնդկաստանում խռովութիւնները չեն դադարում։ Տեղացիները չարունակ ցոյցեր են անում անգլիական կառավարութեան դէմ, յարձակվում են անգլիացիների վրա և արդէն, ինչպէս հեռագիրները հաղորդեցին, սպանութեան մի քանի դէպքեր պատահեցին։ Մի ընդհանուր շարժում էնկատվում անգլիական տիրապետութեան դէմ. բնիկ հնդիկները դժգոհ են բրիտանական կառավարութիւնից այն խիստ միջոցների համար, որ նա սկսեց գործադրել Հնդկաստանում ժանտախտի առիթով, իսկ մահմեդական ազգաբնակութիւնը զրդռվում է թիւրքաց էմիսարների ձեռքով։ Այդ էմիսարները պատելով երկրի մէջ, յորդորում են մահմեդականներին ապստամբվել, այնպէս որ ամեն տեղ տիրում է այն համոզմունքը, թէ Հնդկաստանում չուտով ընդհանուր ապստամբութիւն կը լինի։ Ասում են, որ կառավարութիւնը բռնել է մի գաղտնի գրագրութիւն, որ ցոյց է տալիս, թէ մի ամբողջ դաւադրութիւն է կազմված եղել։

Վերջին խռովութիւնների ժամանակ, որ տեղի ունեցաւ Զիթփուրում, 600 հոգի սպանվեց։ Պունայում խռովութիւնները ուրիշ բնաւորութիւն ունէին, քան Զիթփուրում։ Այդտեղ ժանտախտի առիթով անգլիական կառավարութեան ձեռք առած միջոցների դէմ գանգատները միանդամայն արդարացի էին, որովհետև գործադրվում էին միջոցներ ոչ թէ ժանտախտի դէմ մաքառելու, այլ զինուորները, հիւանդութեան դէպքերը քննելու պատրուակով, մտնում էին բնակիչների տները և անհանգստացնում նրանց։ Իսկ Զիթփուրում խռովութիւններ ծագեցին այն պատճառով, որ մահմեդականները մերժեցին տալ մի դեռնի վարձը, որի վրա մզկիթ էին կառուցել, պատճառաբանելով թէ իսլամի օրէնքով չէ կարելի վարձով տալ մի դեռին, որի վրա մզկիթ է շինված։ Դատարանը, չը յարգելով այդ պատճառաբանութիւնը, հրամայեց քանդել մզկիթը, որով և մեծ գրգռում առաջ բերեց միւսուլմանների մէջ։ Ի հարկէ, բրիտանական կառավարութիւնը ազդու միջոցներ ձեռք կառնի թիւրք էմիսարներին զսպելու համար, բայց միւս կողմից նա հասկացել է, որ բազմամիլիոն ազգաբնակութեան տնտեսական վիճակի բարւոքումը միայն կարող է վերջ դնել պարբերական խռովութիւններին։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԲԻԱՅԻՑ

Կ. Պոլիս, յունիսի 25-ին

«Երիտասարդ թիւրքերը» սկսան շարժիլ, կենդանութեան նշաններ ցոյց տալ։ Շաբաթ մը առաջ թիւրքերէն գրված յեղափոխական յայտարարութիւններ փակցված դռան «Այա Սոֆիա» նշանաւոր մզկիթին ներսի պատին, Բ. Դրան դուրսի պատին, թիւնէլին վերի ու վարի դռներուն և այլ տեղերու վրա։ Ոսմիկանական հսկողութիւնը կրկնապատկվեցաւ ու «երիտասարդ թիւրքերու» ձերբակալումը վերսկսաւ։ Վերջերս մօտ 300 հոգի ձերբակալվելով բանտարկվեցան «Թաշխչա» անուն զօրանոցին մէջ. ասոնց մեծամասնութիւնը զինուորական-բժշկական վարժարանի աշակերտներ են և ասոնց մէջն նաև է յայտնի ազատախոհ Հիւսէյին էֆէնդին, որ կը պաշտօնավարէր նոյն հաստատութեան մէջ. իսկ սրա ընկեր Բիզա պէյը յաջողած է խոյս տալ։ Կայսերական պալատի կողմանէ կարգված յատուկ յանձնախումբ մը պաշտօն ունի քննելու այդ բանտարկվածները։ Թէև «երիտասարդ թիւրքեր» ըսուածները ցարդ գործնական չօչափելի ոչինչ չեն կարողացած ընել, բայց նրանց հետեւողներու թիւը օրըստօրէ բազմանալու վրա ըլլալով,—հակառակ կառավարութեան ձեռք առած ծայրայեղ միջոցներու,—դուցէ ապագային ականատես ըլլանք նրանց դրական գործեր ալ կատարելուն։ Բայց նաև կրնայ պատահիլ, որ Համիտ կառավարչական կամ այլ իրեն յատուկ ճարպիկութեամբ, խաբուսիկ միջոցի մը դիմելով՝ չէզոքացնէ այդ ընդվզողը, բողոքողները։

Անգլիոյ վիքթորիա թագուհւոյն գահակալութեան 60 ամեակին առթիւ, երբ նոյն օրը թէ Թարապլիայի դեսպանատուններէն և թէ պահականաւերէն յօբելեարը ողջունող թնդանօթի հարուածներուն դղրդոցը լսվեցաւ՝ թիւրք խուժանը անդիտակ այդ հանդէսին, կարծելով թէ քաղաքն է, որ կը ռմբակոծվի օտար ռէրութեանց զրահաւորներէն՝ անմիջապէս զինվեցաւ—գլխաւորաբար Քարափին (quai) և Սիրքէճիի կայարանին կողմերը,—վերջին կոտորածին ժամանակէն համբաւաւոր սօփանարով (փիր) և այլ զէնքերով ու կը պատրաստվեր յարձակում գործել քրիստոնէից վրա՝ երբ ոստիկանութիւնը վրա հասնելով՝ ցրվեց ամբոխը ու նոյն իսկ պարագլուխներէն մի քանիսը ձերբակալեց (ի հարկէ նոյն ժամուն եթէ առօք փառօք ճամբու դնելու պայմանով, այս պարագան պէտք է զօրութեամբ հասկնալ)։ Այս անգամ ալ թիւրք խեղճ խուժանին հարամ ըրին իր ուտելիք համբեղ պատառն, չի թողին որ խեղճը անցեալի դիրկը նետվէր անձկութեամբ...

Այս չարթու մէջ դարձեալ դեսպանաժողով գումարվեցաւ. հաւանական է, որ ընդ հուպ հաչտութեան յանդին. երևի թէսալիոյ ամբողջ դաչտը իր քաղաքներով միասին Յունաստանին վերադարձվելէն վերջ, յունաց ոռնմանագլխէն նեղ գիծ մը միայն (որուն մէջ պիտի լինին սակայն մի քանի ամենակարևոր կիրճեր ու ամուր դիրքեր) պիտի թողուն Տաճկաստանին։ Իսկ պատերազմական տուգանքը 3—4 միլիոն ոսկիին չուրջը կը դառնայ։ Միւս կողմէն թիւրք թէ ներկայ ու նախորդ նախարարներէն և թէ անցեալի մէջ գործող բարձրաստիճան պետական անձերէն «Աւագանեաց» ժողովներ կը գումարվին, որոնց նիւթն ալ նոյնն է։

Առհասարակ թիւրք կառավարութենէն զատ ժողովուրդն ալ սաստիկ ընդիմութիւն ցոյց կուտայ գրաւված վայրերէն ետ քաշվելու որոշման դէմ. այդ դժգոհութիւնը արտայայտող ցոյց մը ըրաւ ամբոխը Թոփհանէի կողմը անցեալ շաբաթ. հաւանական է սակայն, որ այդ ցոյցը կազմակերպողը հէնց ինքը՝ կառավարութիւնը եղած ըլլայ։

Այո, Հայաստանի մէջ բարենորոգումները սկսած են մոցնվիլ. այո, նոյն իսկ տեղական թերթերու մէջ պաշտօնապէս հրատարակվեցան։ Ներփակեալ կուղարկեմ ձեզ այդ պաշտօնական զեկուցումը, որոնց հրապարակումը «Մշակի» մէջ՝ ի հարկէ, պիտի գոնացնէ յուռեռես, դըժբարահաւան մաքերն իսկ։ (?!)

Դարեգին

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թեհրան, յունիսի 12-ին

Յունիսի 6-ին քաղաքում լուր տարածվեց, թէ թագաժառանգը, Վեհ. Շահի հրամանով, անմիջապէս պիտի դառնայ Թաւրիզ, բայց մինչև այսօր էլ, չը նայած որ ճանապարհորդական պատրաստութիւններ տեսնված են, զանազան լուրեր ենք լսում. մէկն ասում է՝ թէ գնում է, միւսը թէ յետաձգվել է ճանապարհորդութիւնը։ Բաւական լուրջ շրջաններում յիշվում է, թէ Շահի այս անակնկալ հրամանը հետևանք է վերջերս թագաժառանգի կողմից եղած մի յանդգնի դիտողութեան, որով նա ցոյց էր տուել իր օգոստափառ հօր և հանգուցեալ պապի (Նասրէդդին Շահի) կառավարութիւնների զգալի տարբերութիւնը։ Հաստատ է այսքանը, որ եթէ թագաժառանգի մեկնելը յետաձգվում է, դրա պատճառն այն է, որ Մուզաֆէրէդդին Շահը չատ է սիրում իր որդուն և չէ ուզում անջատվել նրանից։

Քաղաքական նորանոր դէպքերը այն միտքն են տարածում հասարակութեան մէջ, որ Վեհ. Շահը մտադիր է պաշտօնանկ եղած Սադրազամին իր նախկին պաշտօնին հրաւիրելու։ Ասում են, որ այդ մասին մինչև անգամ կողմնակի կերպով բանակցութիւն է սկսվել. բայց թէ մինչև որ աստիճան հաւանական է այս ենթադրութիւնը, կը յայտնվի միայն այն ժամանակ, երբ քաղաքական հորիզոնը կը մաքրվի մութ ամպերից։ Եթէ Սադրազամի իր պաշտօնին անցնելը իրագործվելու լինի, վստահ ենք, որ կառավարութեան գործերի կանգ առած անիւը չուտով պիտի չարժի, ժողովրդի միջից հեռացնելով այն բոլոր դժուարութիւններն ու արատները, որոնք սպառնում են պարսից գահին... Հաստատ աղբիւրից լսում ենք, որպէս թէ Սադրազամի համար բացվել է մի խիստ կարևոր գաղտնիք, չնարհիւ մի բարձրաստիճան պարոնի (որի անունը յիշելը անյարմար է), որը Սադրազամի կասկածը փարատելու համար, թէ ինքը չէ եղել նրա պաշտօնանկութեան պատճառը և թելադրողը, ուղարկում է նրան մի չարք տեղեկագրեր, որ կազմել է նոյն իսկ Սադրազամի ամենահաւատարիմ և վստահելի ծառաներից ամենաառաջինը, տարիների ընթացքում իր տիրոջ բոլոր չարժումները լրտեսելով, և ուղարկել է այդ տեղեկագիրը ներկայ Շահին, երբ նա թագաժառանգ էր։ Այդ ժամանակից ծագեց Շահի մէջ Սադրազամին պաշտօնանկ անելու միտքը...

Ս. Գ. Ժիւլիթէր

ՆԱՄԱԿ ԲՈԼԳԱՐԻԱՅԻՑ

Ռուսչուկ, յունիսի 20 ին

Ինչպէս մեր նախորդ նամակով ասել էինք, թէ՝ «տէր Ղևոնդ բարձր ուսում առած և իդէալիստ մարդ չէ», ինքն էլ զայդ հաստատեց։ Երբ տեղական թերթերն՝ «Իրաւունք», «Հայելի» և «Կատակ», սկսան մերթ ապ, մերթ պաղ փչել, գրոնն էլ անոնց արձագանք տալ, չենք գիտեր տէր Ղևոնդ ղգացվեց, թէ ամաչեց, սա միայն կարող ենք ասել, որ իր հրաժարագիրը տալուց 15 օր վերջ սկսաւ յայտարարել՝ «ես քահանայ եմ, այլ տեղ պիտի գնամ քահանայագործելու». պատւաւոր եղանակաւ ազատելու հարցը ստիպեց իրեն, որ վերամանէ իր կոչում, և որովհետև այս կողմերում այլ ևս երես չը մնաց, անցաւ Ռումանիա. դէս ու դէն դարձվելուց վերջ յաջողվեց իրան տարեկան, ըստ իր յայտարարութեան, չուրջ 200 նապոլէոն եկամուտով Բուքուրէշտի մօտ Թրկու-Օգնա քաղաքի 60 տուն հայոց քահանայագործել, զի տեղւոյն քահանան ծերութեան պատճառաւ անկարող է դառել։ Արդ, այս խաղը մեզ խորհել տալիս է, թէ ինչու տէր Ղևոնդ վերատին իր պաշտօնը մտաւ. նկատեց թէ ապրելու համար գործ պէտք է, ինչպէս նաև կին, և որովհետև այս կողմերում վարկը կոտրվեց, անցաւ Ռումանիա, ուր տեղւոյն ժողովուրդը վարժ է չը հետաքրքրվել, թէկուզ տէրտէրը մէկ երկու համանի օր ցորեկով հետը մանածէ. տէր Ղևոնդ անչուշտ յետ այսու ցանկացած եղանակաւ պիտի ապրի։ Առաքեալը ասում է. «Վաւ է ամուսնանալ քան թէ ջեռնուլ». մեր սինոդականը այս լաւ յիշելու են, զի խրատիր գրված չէ այս պարբերութեան մէջ աշխարհականի, կրօնականի կամ այրիացեալի։— Դարձեալ երբ քահանաներից իբր խորհուրդ եկեղեցւոյ կը պահանջվի ամուսնացած լինել, նոյն պահանջը չարունակական լինելու չէ, և կամ թէ երբ երէցկինը կը մեռնի, ըստ խորհրդի քահանային վրայէն աստիճան մը կը պակասի. ուրեմն կամ այդ աստիճանը լրացնելու է և կամ պաշտօնեայն իր պաշտօնից հրաժարեցնելու է. սոքա հակասութիւններ են՝ բարեփոխութեան կարօտ։

Ցեսած ենք և ունենք սրբակրօն տէրտէրներ, որոնք լոկ իրենց տուած ուխտին հաւատարիմ կը մնան սրբազղծութիւն մը կատարած չը լինելու բարեմտութեամբ, երբ կը զրկվին իրենց երէցկիներից, ու չեն խորհիր բնաւ վերամուսնութեան. մենք այս կարգի տէր հայրերուն մեր յարգանքները կը նուիրեմք իրենց հաստատակամութեանը համար, ու կուզենք յառաջ բերել մի այլ խնդիր։

Մենք ալ չատերի հետ մի պահ համաձայնենք, և չը ներենք ու թոյլատրենք քահանանե-

րին, որ վերամուսնանան, դի եկեղեցին չը թոյլատրեր. բայց ինչ ասենք երէցկիններին էլ, երբ կայրիանան ու եկեղեցին խստութեամբ կարգելէ սոցա վերամուսնութիւնը. մտաբերեցէք դեռատի երէցկին մի 2—3 տղաքներով ծանրաբեռնեալ. կը վախճանի իր տէրտէր ամուսինը. եկեղեցին վեց ամսու չափ հացագին մի կուզարկէ, յետ այնու կը դադրեցնէ. հրամմեցէք սինոդական ս. հայրեր, հանդուցեալ տէրտէրն աղքատ մէկն էր և երէցկինջ կնութեան առնող մէկն կը գտնուի ու եկեղեցին չը թոյլատրեր. սա ինչ մոլար դատապարտութիւն է, որին հնազանդիլ պարտի մի քանի տարի քահանայի մի հետ ապրած լինելուն համար. այս ամենն ծիծաղելի դրութիւններ են և հարկ է, որ բարեփոխվին։

***

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Nord» լրագիրը հետևեալն է գրում յունիսի 24-ից. «Անդ իսկան լրագիրների հաղորդած տեղեկութիւնը, թէ, հաւանօրէն, պատերազմական գործողութիւնները կը վերսկսվեն Յունաստանի և Թիւրքիայի մէջ՝ անպայման ճիշդ չեն։ Ոչ եւրոպական կաբինէտները, ոչ Ռուսաստանը մասնաւորապէս, ոչ մի դէպքում չեն թոյլատրի թշնամական գործողութիւնների վերսկսելը այն վայրկենից, երբ Յունաստանը յանձնեց իր վիճակը մեծ պետութիւնների ձեռքը։ Եթէ Բ. Դուռը նոր դժուարութիւններ կը յարուցանի, եւրոպական կօնցէրտը կարող է պարտաւորեցնել Նրան՝ հնազանդվել իր կամքին»։

—Մեծ պետութիւնների դեսպանների հաւաքական յիշատակագրին իբրև պատասխան, Բ. Դուռը հետևեալ ուլտիմատումն է առաջարկել նրանց. 1) ստրատեգիական սահմանը որոշել Պինէ գետի երկարութեամբ, 2) պատերազմական տուգանք տալ 5 միլիոն ֆունտ ստերլինգ և 3) վերաքննել կապիտուլացիաները։ Երբ մեծ պետութիւնները համաձայնվեն ընդունել այդ պայմանները, Թիւրքաց զօրքը անմիջապէս յետ կը կանչվի։

—Կ. Պոլսից հաղորդում են, որ գործերի վիճակը Թէսալիայում գոհացուցիչ չէ։ Սուլթանի և մեծ-վիզիրի պալատներում ստացվել են զբաղեալ պաշտօնեաներից դալանի զեկուցագրեր, որոնք յայտնում են, թէ զօրքի տրամադրութիւնը այժմ աւելի քան երբ և իցէ գրգռված է։ Զինուորները սպառնում են (?) ապստամբվել, եթէ Թէսալիան վերադարձնվի։ Օֆիցէրները դիմել են Էդհէմ-փաշային մի հանրագրով, որի մէջ յայտնում են, որ Թէսալիան կարող է վերադարձնվել Յունաստանին միայն 150,000 Թիւրքաց զօրքի դիակները կոխ տալով։

—Կ. Պոլսում, ինչպէս երևում է, չատ քիչ յոյսեր ունեն խաղաղութեան բանակցութիւնների աջող հետևանքի վրա։ Այդ առիթով «Berliner Tageblatt» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում է. «Ամեն կողմից երկիւղալի լուրեր են ստացվում։ Հայերին վերագրում են անցեալ տարվայ խռովութիւնները կրկնելու դիտաւորութիւնը. չը նայելով դրան, կամ մինչև անգամ դրա պատճառով կառավարութիւնը կամենում է ծառայութեան մէջ ընդունել արձակված պաշտօնեաներին։ Պարսկական սահմանից հաղորդում են, որ արշաւանք է պատրաստվում Թիւրքաց հողի վրա։ Շատ յուզիչ է երևում Ռուսաստանի դրութիւնը (?), որին վերագրում են խաղաղութիւնը խախտելու ցանկութիւնը։ Իզմիրիօսկում անհնար են համարում Թեսալիա վերադարձնելը։ Զորս օրվայ ընթացքում երեք մինիստրական խորհուրդ տեղի ունեցաւ։ Հաստատ աղբիւրից ես գիտեմ, որ Անգլիայի քաղաքականութիւնը յանկարծ Թիւրքերին նպաստաւոր ընթացք ընդունեց. դեսպանն ասաց ինձ. «Ամեն կողմից աչխատում էին ձգձգել գործը. մեր համբերութիւնն արդէն հատաւ։ Եկի երկու չարաթ,—ոչ աւելի,—մենք կը սպասենք։ Եթէ այն ժամանակ հարցը լուծված չի լինի, մենք կը սկսենք։ Թէ այն ժամանակ ինչ տեղի կունենայ, նա չասեց, սակայն մի բան ճիշդ է. եւրոպական կօնցէրտը կատարելապէս խախտվում է։»

—«Standard» լրագրի Կ. Պոլսի թղթակցի խօսքով, Թիւրքաց մինիստրների խորհուրդը երկուշաբթի օր զեկուցում կազմեց, որով ցանկութիւն է յայտնում վերսկսել պատերազմական գործողութիւնները մէկ չաբաթից յետոյ, որովհետև անհնար է խաղաղութեան պայմանները կնքել Յունաստանի հետ Եւրոպայի միջամտութեամբ։

—«Frankfurter Zeitung» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում է, որ վերջին մինիստրական արտակարգ խորհրդում, որ գումարված էր դեսպանների հաւաքական յայտագիրը ստանալուց յետոյ, Տէվֆիկ-փաշան պետութիւնների պահանջներին համապատասխանող առաջարկութիւններ արաւ, բայց այդ առաջարկութիւնները մերժվեցին։ Սիմիայի հասարակական աշխատանքների մինիստր Զէլալէդդին փաշան համամիտ էր Տէվֆիկ-փաշային, իսկ մեծամասնութիւնը մեծ վիզիրի կողմն անցաւ, որը պահանջում է միացնել ամբողջ Թեսալիան Թիւրքիայի հետ։ Սակայն եւրոպական լրագիրներից շատերը անհնարին են համարում, որ մինիստրների խորհուրդը որոշումներ կայացնէր սուլթանի ցանկութեան հակառակ, թէպէտև այդ վերջինի յամառութեանը Նրանք լուրջ նշանակութիւն չեն տալիս, բացատրելով այդ նրանով, որ սուլթանը ցանկանում է միայն այնպէս ցոյց տալ իր հպատակներին, թէ ինքն ամեն միջոցներով աշխատում է պաշտպանել Թիւրքիայի շահերը։

—Վիէննայի կիսապաշտօնական «Fremdenblatt» լրագիրն ասում է, որ Բ. Դրան յոյսերը պետութիւնների տարաձայնութեան վրա սխալ են և այդ պատճառով նրա յամառութիւնը ապարդիւն է։ Նրա ֆինանսական միջոցները այն քան փառաւոր չեն, որ նա կարողանայ անվերջ զէնքի տակ պահել մի նշանաւոր զօրք, իսկ յոյս դնել որ իր այժմեան ծախսերի համար Բ. Դուռը վարձատրութիւն կը ստանայ, նոյնպէս չէ կարելի։ Վերջ ի վերջոյ, նա իր ներկայ վարմունքով կը վնասի միայն իրան պետութիւնների աչքում։

—«Standard» լրագրի Կ. Պոլսի թղթակցի տեղեկութիւնների համեմատ, սուլթանը այս օրերս կարծիք յայտնեց, թէ պետութիւնները չեն կարող Թիւրքաց զօրքերը դուրս անել Թեսալիայից և եթէ պետութիւնները չեն համաձայնվի ընդունել իր պայմանները, ինքն կը հրամայի իր զօրքերին առաջ չարժվել և Աթէնքում կը պահանջի յոյներից իր ցանկացած պայմանները։

—Բոլգարական «Сгранджа» լրագիրը հայերին և մակեդոնական բոլգարներին հրաւիրում է դէպի ապստամբութիւն. «Բոլգարական ժողովուրդը, գրում է լրագիրը, գտաւ իր փրկութիւնը մի կուլի մէջ, որի նշանաբանն է կեանք կամ մահ։ Նենգաւոր Եւրոպայի անչարժ քաղաքականութիւնը հասցրեց մեզ այդպիսի դրութեան։ Նա խաբում էր մեզ, խոստանում էր մեզ զանազան ռէֆորմներ տալ, բայց, ա՜ւաղ, ոչինչ չը կատարեց։ Նա միայն խաճեց գործը և վատացրեց մեր եղբայրակիցների դրութիւնը Մակեդոնիայում և Օդրինեան վիլայէտում։ Նրանց կոտորում են անպատիժ, դառների նման։ Հէնց որ բարձրացնում են նրանք իրանց ձայնը, իսկոյն երևան է գալիս նենգաւոր Եւրոպան և անուանում է այդ՝ խռովութիւն, ապստամբութիւն։ Լռում են նրանք, և ահա նրանց գլխին կրկին կախվում է դամոկլեան սուրը։ Մեր եղբայրակիցները այնպիսի դրութեան մէջ են գտնվում, որ պէտք է կըռւենք նրանց համար մինչև արեան վերջին կաթիլը։ Այժմ հասել է ժամանակը կատարելու մեր պարտքը և ցոյց տալու նենգաւոր Եւրոպային, որ նրա խաղաղութիւնը խախտված է։ Այժմ ժամանակ է, որ մենք յայտնենք Եւրոպային, թէ մենք ցանկանում ենք մի բան՝ կամ տեսնել Բալկանեան թերակղզին ծաղկած և երջանիկ, կամ մեռած անապատի փոխարկված։»

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հոգաբարձուի յանցանքը։ Հայաստանեայց տիրացուները սարսափահար են. տեղի է ունեցել մի ահեղի դէպք, մի չը տեսնված դժբաղդութիւն։ Շիտի, աղմուկ, յուսակտուր վայ ու լաց... Ինչ է պատահել։

Գաւառական մի հոգաբարձուի տանը իջել է մի բողոքական պատօր։ Ինչպէս չը ճաքվել...

Տեղը, ուր օրվայ իրողութիւն է դարձել այդ անօրինակ յանդգնութիւնը, Ղարաքաղի տիրապահ մայրաքաղաքն է. իսկ այդ դժբաղդութիւնը ողբացողը «Արձագանքն» է, Հայաստանեայց տիրացուների օրգանը։ Մէկը երդուելով, արտասուքն աչքերին հաւատացնում է, թէ լուսաւորչական հոգաբարձուն իրաւունք ունի թոյլ տալ, որ իր տունը բողոքական պատօր մտնէ, միւսը հակառակն է պնդում։ Եւ որովհետև Սրբազան Յովհաննիսեանի գրական ճաշիճը օր օրի վրա բորբոքելու անդիմադրելի հաճութիւնն ունի, ուստի մեզ կը լինի չենթադրել, որ լուսաւորչական հոգաբարձուի և նրա բողոքական հիւրի ամեհի հարցը կը քննվի բոլոր տեսակէտներից, մանաւանդ միաբնակութեան և երկաբնակութեան տեսակէտից։ Եւ երբ այդ բոլորը կատարված կը լինի ու վերջացած, այն ժամանակ, ի հարկէ, կը սահմանվի և յանցաւորի պատիժը։ Նախ և առաջ, պարտաղանց հիւրընկալը, ի հարկէ, կը զրկվի ազգային-լուսաւորչական հոգաբարձուի պաշտօնից. ապա նրանից ստորագրութիւն կառնվի, որ նա պարտաւոր է երեք ամսվայ ընթացքում իր անունը յիշատակել տալ Երուսաղէմի միաբանութեան «յիշեալ եղբիցներ»ի մէջ, ստանալ այնտեղից 50 հատից բաղկացած մի սև տէրողորմեայ և ամբողջ օրը չրխկացնել «ի փրկութիւն հոգւոյ իւրոյ»։ Մընում է բողոքական պատօրը։ Նրան և նրա պաշտօնակիցներին խստիւ արգելել, որ այսուհետև Շուշի չը մտնեն և լուսաւորչական հոգաբարձուներին ու նրանց նման ազգային այլ պաշտօնեաներին փորձութեան մէջ չը գցեն։

Մենք միանգամայն համոզված ենք, որ այս բոլորից յետոյ Արգար Յովհաննիսեանի երախտիքը դարուց դար չի մոռացվի, և պատմութիւնը հրճուանքով կարձանագրէ, որ նա, այն, իր «գրական գործունէութեան» ընթացքում ոչինչ, ոչինչ չէ խնայել, որ հայերը չը զրկվեն «Պղնձի քաղաքի» համից ու հոտից...

***

Այս տարի Վոլգա գետի վրա տեղի են ունենում այնպիսի մառախուղներ, որոնց նման ծերերից ոչ ոք չէ տեսել։ Մառախուղը այնքան թանձր է լինում, որ մօտ տարածութեան վրա չեն տեսնվում ափերը։ Սարատովի մօտ իջած մառախուղը այնքան խիտ էր, որ նոյն իսկ Վոլգայի ջուրը չէր երևում չոգենաւից։ Մառախուղը չոր է և ծանր շնչառութեան համար։

***

Վարշավայի քաղաքամասերից մէկի աղքատները նորերս տեղեկացան, որ մուրացկաններից մէկը, Կրուչկովսկի, 80 տարեկան մի ծերունի, բաւական մեծ կարողութեան տէր մարդ է, ունի մօտ 20.000 ռուբլու արժողութեան ամրանոցներ և համարեա մի այդքանի էլ առձեռն փող, որ պարտք է տուել հաստատ գրաւականով։ Կրուչկովսկու դէմ, իբրև խաբեբայի, բացված է դատաստանական քննութիւն։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԼՕՆԴՕՆ, 2 յուլիսի։ Կ. Պոլսից «Times» լրագրին հեռագրում են, որ Անգլիան և Ֆրանսիան ձեռնպահ մնացին և չը պատասխանեցին Բ. Դրան չրջաբերական յայտագրին՝ կրեսէ կղզին օգնական զօրքեր ուղարկելու իր դիտաւորութեան մասին։ Իտալիան պատասխանեց բերանացի յայտագրով, որի մէջ խորհուրդ է տալիս Բ. Դրան կրկին մտածել իր որոշման մասին։

ՊԱՐԻԶ, 2 յուլիսի։ Ֆելիկս Ֆոր ներկայ էր Միրաբօ կամուրջի բացմանը։ Քաղաքային խորհրդի նախագահ Սօտան, շնորհակալութիւն յայտնելով նախագահին, վերջը խնդրեց նախագահից ֆրանսիական մայրաքաղաքի բարեմաղթութիւնները յայտնել Ռուսաստանին։

ՏՕՄՍԿ, 3 յուլիսի։ Յուլիսի 2-ին, բարձր ադմինիստրացիայի, դատաստանական վարչութեան պաշտօնեաների և ատաղին բազմութեան ներկայութեամբ, հանդիսաւոր կերպով բացվեցին դատաստանական նոր հիմնարկութիւնները։

ԿՐԱՍՆՕԵԱՐՍԿ, 3 յուլիսի։ Յուլիսի 2-ին նահանգական դատարանի նախագահը բացեց դատաստանական նոր հիմնարկութիւնները։

ԻՐԿՈՒՏՍԿ, 3 յուլիսի։ Յուլիսի 2-ին արդարադատութեան մինիստրը դատաստանական նոր հիմնարկութիւնները բացեց Իրկուտսկում։

ԶԷԴԴԱ, 3 յուլիսի։ Արդէն 8 օր է մահվան դէպքեր չեն եղել ժանտախտից։

Կ. ՊՕԼԻՍ, 3 յուլիսի։ Լուրերին նայելով, մեծ պետութիւնների թագաւորների սուլթանին ուղարկած բոլոր պատասխանները լուրջ խորհուրդ են տալիս զիջել սահմանին վերաբերեալ հարցում։ Գերմանական կայսրի պատասխանի մէջ ասված է, որ կառավարութիւնը նորից կը քննի սուլթանի պահանջը։ Ապա գերմանական կառավարութիւնը իր դեսպանի միջոցով նոյնպիսի լուրջ առաջարկութիւններ արաւ Բ. Դրան զիջողութեան վերաբերմամբ։ Սուլթանը պատասխանեց, որ ուշադրութեան կառնի այդ ցուցմունքները, բայց ազատ է համարում իրան որ և է պատասխանատուութիւնից այն հետևանքների համար, որ առաջ կը բերի Թեսալիան ամբողջապէս վերադարձնելու տպաւորութիւնը զօրքի և ժողովրդի վրա։ Մինիստրների խորհրդի վճիռը դեռ ևս յայտնի չէ։ Պալատի և մինիստրների դիմադրութիւնը, ըստ երևոյթին, չարունակվում է։ Ժողովրդի յուզմունքը նկատելի չէ, բայց օֆիցէրները, պաշտօնեաները և հոգևորականութիւնը դէմ են Թեսալիան վերադարձնելուն։ Կարծում են, որ չարժումը արհեստական կերպով է պահպանվում։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 յուլիսի։ Առաջին ներքին փոխառութեան տոմսերի 65-րդ տիրաժը։ 15855, 16469, 11033, 13374, 15491, 16126, 9715, 374, 16311, 2684, 8651, 9849, 14764, 18387, 10217, 11667, 8024, 14288, 9542, 618, 17300, 7095, 15561, 1271, 2790, 14895, 14515, 911, 5465, 935, 2296, 4515, 19607, 5952, 16114, 8009, 4464, 8457, 14304, 1967, 1520, 2929, 17058, 18705, 4908, 4009, 5620, 17752, 15303, 19541, 16875, 14407, 13204, 14539, 11868, 16422, 14463, 2815, 16315, 9569, 751, 9339, 12329, 344, 18858, 17890, 15466, 5366, 19173, 16848, 9560, 11998, 12744, 12711, 2897, 2493, 6290, 9308, 524, 382, 2735, 5110, 10237, 9217, 12229, 11396, 17495, 15447, 7546, 4188 1404, 15062, 19732, 16233, 1665, 15958, 4756, 1105, 15851, 4074, 6075, 12632, 17594, 6157, 11200, 13992, 12269, 10988, 106, 3951, 11250, 2750, 1917, 10386, 9654, 19394, 8614, 3142, 18201, 13779, 17285, 3285, 2260, 11736, 6737, 1856, 4801, 1697, 8455, 2703, 19771, 4815, 9281, 17811, 11976, 12469, 9544, 9933, 6545, 2351, 11222, 2262. 3845, 6694, 9096, 13017, 10416, 41, 6667, 17378, 5323, 129, 16029, 11622, 1895, 15813, 452, 5558, 12113, 13561, 17801, 1824, 11392, 15326, 14507, 14942, 741, 5494, 18900, 3014, 3971, 15977, 11875, 4556, 18980, 11888, 12912, 9993, 5355, 18306, 11597, 8799, 7161, 19540, 8888, 5682, 11204, 2513, 12900, 3978, 18108, 831, 12353, 437, 19819, 12875, 15688, 14083, 12115, 17208, 3093, 14447, 18220, 4077, 8454, 2700, 16760, 1561.

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիր աբուժութեան, վենեբական (սիֆիլիս) և ներք ի հիւանդութիւններ։

Դ. Գ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց և երեխայոց հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Դ. ԳՈՒՐԿՕ—1½—2½ ժ. ներքին, ականջի, կոկորդի և միզասեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—6—7 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ.

Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է առնում մէզի, խխբաբեան, կաթի և այլն։

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ համար հարկաւոր է տեսուչ, որը ունենալու է չաբաթական 12 դաս, տարեկան ռոճիկ 1500 ռուբլի։ Ուսմի հոգաբարձութիւնը նոյն դպրոցի խնդրում է ցանկացողներից չատերն յայտնել իրանց կամքը հոգաբարձութեան, ուղարկելով ունեցած ուսման վկայագրերը։

Անդամ հոգաբարձութեան՝

ԱՍՓԱԼՏ

Նաֆթալանի՝ ամուր, միւսներից բաւական էժան է նստում։ Պահանջներով դիմել Գանձակ, Նաֆթալանի ասֆալտի պահեստը. այդտեղ է և ֆրանկո-ռուսական պօրտլանդի ցեմենտի պահեստը։

ՇԱՄԱԽՈՒ բնակիչ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ որդին, ՂԵՒՈՆԴ ՍԱՐԳՍԵԱՆ 24 տարեկան մի երիտասարդ, ահա մի տարի է, որ հեռացել է Շամախուց և եկել է Թիֆլիս: Հայրը շատ անգամ նամակներ է գրել նրան, բայց պատասխան չէ ստացել, այնպէս որ յայտնի չէ թէ ուր է նա: Ուստի խնդրվում է բոլորից, ով կարող է ցոյց տալ նրա հասցէն, կամ գտնվելու տեղը, հաղորդել հետևեալ հասցէով. Тифлисъ, Сурп-Карапетская церковъ, Арутюну Сарксяну. 2—3

МИ ФОРЗАՌՈՒ ԵՒ ՑԵՆԶ ՈՒՆԵՑՈՂ

ՄԻ ՓՈՐՁԱՌՈՒ ԵՒ ՑԵՆԶ ՈՒՆԵՑՈՂ

ՎԱՐԺՈՒՀԻ

որը անպատճառ գիտէ և լաւ ձեռագործ, հրաւիրվում է Շամախի հայ ռեալական—լուտերական ուսումնարանի համար:—Փափագողները դիմում են,—Շամախի, լուտերական փաստորին:

(№ 77) 2—3

1896 մարտի վերջերը Կարնոյ Սանասարեան վարժարանի աշակերտներէն Եօզղատի ՄԻՔԱՅԵԼ ԳԱՊԼԱՆԵԱՆ երիտասարդը Կարնէն ճանապարհ ընկնելով կը հասնի Տրապիզոն, ուրկէ կը պատրաստվի նաւ նստել Պոլսոյ համար. բայց այդ ժամանակէն սկսեալ ցարդ ոչ յիշեալը հասաւ Պոլիս, ոչ էլ անկէ կամ անոր վրայով լուր առնուեցաւ Պոլիս:—Արդ կը խնդրվի հասարակութենէն որ եթէ զայն ճանչցող ու տեղը գիտցող եղած է՝ բարեհաճի այս մասին տեղեկագրել լրագրի միջոցով: Ցիշեալ երիտասարդը կորսուած կարծելով, զայն ողբացողը անհունապէս երախտապարտ ու շնորհակալ պիտի ըլլայ, եթէ այս մասին գենքը լուսաբանող մը գտնվի: (№ 76) 2—5

(№ 67)

ПРЕДОСТЕРЕЖЕНІЕ.

ВЫСОКІЯ ДОСТОИНСТВА НАШИХЪ ИЗОБРѢТЕНІЙ:

Цвѣточнаго о-де-колона, Глицериновой пудры, усовершенствов. Глицериноваго мыла и парфюмеріи „Персидская сирень“, вызываютъ массу подражателей, что и вынуждаетъ насъ просить гг. покупателей обращать вниманіе на нашу фабричную марку и фирму.

БиКº БиКº БРОКАРЪ и Кº ВЪ МОСКВѢ. ФАБРИЧН. ШТЕМПЕЛЬ УТВЕРЖД. ПРАВИТЕЛ. 1864 г. 1864 г.

1—8

Մ Ա Ս Ս Ա Ժ

Բժիշկների ղեկավարութեան տակ, պարապում եմ զանազան հիւանդութիւնների բժշկելով ՄԱՍՍԱԺՈՎ, և առողջական ԳԻՄՆԱՍՏԻԿԱՅՈՎ: Հիւանդների ընդունելութիւնը՝ $5^1/_2$—$6^1/_2$ ժամը երեկոյեան: Աւչալեան փողոց, № 19:

82—146 ԳԷՈՐԳ ԽՈՍՐՈՎԵԱՆՑ

ԲԺՇԿԱՊԵՏ ՋԱԽԱՐԲԷԳԵԱՆ

Ամառնային ամիսներին՝ կովկասեան հանքային ջրերում ընդունում է հիւանդներ. Հասցէն՝ Пятигорскъ, Верхній Бульваръ, № 13, д. Боцва.

(№ 76) 3—3

ԲԺՇԿԱՊԵՏ Ե. Ի. ՓՐԱՆՑԻՈՒՍ

Մասնագէտ կոկորդային, քթային և ականջային հիւանդութիւնների ամառը ընդունում է միայն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը ժամը 6—7 երեկոյեան Ելիսէևովսկայա փողոց տուն № 4 Դումաէի հանդէպ

(№ 76) 2—12

ՈՒՍՈՒՑԻՉ ԲԻՐՇԷՐՏ

պատրաստում է երեխաներին գիմնազիա մտնելու համար: Աւչալեան փ. № 13.

(№ 76) 5—12



ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
ՌԻՍ-ԳՈՒՍՏՄԱՆԻ

(Տնային գործածութեան համար)

ՍՄԲԱԿԱՅԻՆ ՁԷԹ, սմբակները պնդացնելու, կակղացնելու և սևացնելու համար: Նա պահպանում է սմբակները ճաքճքելուց և նպաստում է նրանց կանոնաւոր աճման: ԳԻՆԸ՝ 60 կ. և 1 ր.:

ԿԱՇՈՒԻ ՕԾԱՆԵԼԻՔ, կակղացնում է ամեն տեսակ կաշի, պահպանում է նրան խոնաւութիւնից և բորբոսումից, շինում է նրան անթափանցելի և ճկուն. այս օծանելիքը անփոխարինելի է որսորդական և ուրիշ կօշիկների, չափըլէճների, սանձերի, ձիի սարքի, չէմօդանների և ուրիշ կաշուէ առարկաների համար: ԳԻՆԸ՝ 75 կոպ.:

ԹԱՄԲԱՅԻՆ ՍԱՊՈՆ (յատկապէս սպիտակ կաշուց շինած թամբերի համար): Գործ է ածվում մեծ աջողութեամբ ամեն տեսակ սպիտակ և զանազան գոյների կաշի մաքրելու: ԳԻՆԸ՝ 1 ր. 25 կ.:

Ծախվում է դեղարարական և կաշեղէն ապրանքների խանութներում:

Գլխաւոր պահեստը Բարձրագոյն հաստատված՝ դեղատան ապրանքների Կովկասեան ընկերութեան մէջ, Թիֆլիս և Բագու:

(№ 76) 33—50

Чистый Какао Блокеръ питательный напитокъ

ԿԱԿԱՕ

Թասը նստում է միայն 4 կոպ.

Առաջարկվում է առողջացողների և երեխաների համար:

Միակ պահեստ Բարձրագոյն հաստատված դեղատան ապրանքների կովկասեան ընկերութեան մէջ:

(№ 76) 46—50

ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
ՌԻՍ-ԳՈՒՍՏՄԱՆԻ

(Տնային կարիքների համար)

ՊՕԼԻՏՈՒՐԱ «ԿԱՅԾԱԿ»: Մի քանի րօպէում նորոգում է հին, անշնորհ, խաղխղած կահկարասիքը, պիանինօ, րօյալներ, հայելիի և ուրիշ շրջանակներ, արկղիկներ, տփիկներ և այլ յղկած փայտեայ առարկաներ—չը դիմելով ատաղձագործի կամ ողորկողի օգնութեամբ: ԳԻՆԸ՝ 1 ր.:

ՏՕԿԱՅԵԱՆ ԲԱԼԶԱՄ—միջոց ոտքի կոշտերից մօզօլներ), ելունդներից և կաշուէ այլ ուռոյցքներից: «Տօկայեան բալզամը» առողջացնում է ոտի կոշտերը, ելունդները և այլն, ամենակարճ ժամանակում. արմատներով ոչնչացնելով նրանց, նա, սակայն, ցաւ չէ պատճառում: ԳԻՆԸ՝ 60 կ.:

Ծախվում է դեղարարական խանութներում:

Գլխաւոր պահեստը Բարձրագոյն հաստատված դեղարարական ապրանքների կովկաս. ընկերութեան մէջ, Թիֆլիս և Բագու:

32—50 (№ 76)

ԿՏԱՒԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

(Բամբակի մանուածքի)

ԺԱՌԱՆԳՈՒՀԻՆԵՐԻ Յ. ՉԻԹԱԽԵԱՆԻ

(Հիմնված է 1869 թ.)

ГР. МЕДАЛЬ АЛЕКСАНДРЪ III ИМПЕРАТ. И САМОД. ВСЕРОСС.

КАВКАЗСКАЯ ВЫСТАВКА СЕЛЬСК. ХОЗЯЙСТВА И ПРОМЫШЛЕННОСТИ 1889.

ԳՈՐԾԱՐԱՆԸ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

ԿՏԱՒ ՀԱՍԱՐԱԿ 15—30 ՎԵՐՇՕԿ ԼԱՅՆՈՒԹԵԱՄԲ
ԿՏԱՒ I ՏԵՍԱԿԻ 15—30 » »
ԿՏԱՒ ՀԱՍՏ » 12—30 » » (մանուսր պատուէրներով)

ԹԵԼ ԿԾԻԿՆԵՐՈՎ
ԹՈՔ ԲԱՄԲԱԿԻ ԹԵԼԻՑ $1/_4$''—3'' ՀԱՍՏՈՒԹԵԱՄԲ
ԹԵԼԻ ԾԱՅՐԵՐ (пакля) ՄԵՔԵՆԱՆԵՐ ՄԱՔՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

ԲԱՄԲԱԿ ՄԱՔՐԱԾ (вата) I ՏԵՍԱԿԻ
ԲԱՄԲԱԿ ՄԱՔՐԱԾ II »
ԲԱՄԲԱԿ ԹԵՐԹԵՐՈՎ I ՍՈՍԻՆՁՈՎ (մասնաւոր պատուէրներով)
ԲԱՄԲԱԿ ԹԵՐԹԵՐՈՎ II » ՆՇՏՈՎ

Առաջարկում ենք պ.պ. վաճառականներին և գործածողներին ուշադրութիւն դարձնել մեր գործարանում պատրաստվող կտաւի ամրութեան և ներկեր ընդունելու յատկութեան վրա և չը շփոթել Ռուսաստանից եկած կտաւների հետ:

Կտաւի նմուշները և պրէյսկուրանտները ուղարկվում են ըստ առաջին պահանջման ձրիաբար:

Հասցէն՝ Тифлисъ, главная контора фабрики. Уголъ Нагорной и Сергіевской ул. собс. д. телефонъ конторы 266, а фабрики 24. (շ. ե.) (№ 78) 1—50

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով տեղեկացնում է Թիֆլիսի անշարժ կալուածքների պ.պ. տէրերին, որ Թիֆլիսի Քաղաքային Դումայի 1897 թւի մարտի 24-ի որոշման համաձայն, վճռված է նշանակել ներկայ 1897 թւի համար գնահատողական տուրքի լրացուցիչ գումար $1/_8$ պրօցէնտի քանակութեամբ, բացի այժմ առնվող $3/_4$% գումարից: Լրացուցիչ գումարի մուծնելու ժամանակամիջոցը որոշված է այս տարվայ յուլիս ամիսը և այդ ժամանակամիջոցը անցնելուց յետոյ տուրքը կառնվի տուգանքների յաւելուածով, ընդհանուր հիմանց վրա:

Դրան վարչութիւնը աւելացնում է, որ վերոյիշեալ լրացուցիչ գումարը նշանակված է միայն 1897 թւի համար և հաւասար է իւրաքանչիւր կալուածքի գնահատողական տուրքի կէս տարվայ արժէքի մէկ երրորդական մասին: (№ 77) 2—3

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են վ կ ա յ ա կ ա ն ն ե ր:

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական Թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր փրիդոնովի տանը, № 9, Սերգիեվսկայա և Նագօրնայա փողոցների անկիւնում: Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձ ր ի ա պ է ս եղբ. Ծովյանօվների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

(ե. շ.) (№ 76) 4—25

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պոլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 9/21 յուլիսի ՍԻՐԿԱՍԻ շոգենաւը, նաւապետ ՀԱՐՐԻԳ և այդպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամի 4-ին ճաշից յետոյ: Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից

Պ ա կ ա ս գ ն ե ր ո վ: Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Ալինօին, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Նախկին Արծրունու քարվանսարա: ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլդարեանին, Կոլիւբաեինսկայա հրապարակ: ՆՈՎՕՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիօր Հէրշէնրօդերին: (№ 76) 20—20

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ ԽԱՐԿՕՎՈՒՄ ԲԱՑՎՈՒՄ Է

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Ընդունվում են խնդիրքներ երկու սեռի ունկնդիրներից, որոնք կամենում են ատամնաբոյժի (зубной врачъ) կամ դանտիստի դիպլոմ ստանալ: Ուսումնարանում դասախօսութիւններ կը կարդան համալսարանի պրօֆէսօրներ՝ Ս. Պօպօվ, Բէլօուսով, Գօգոլկալօվ, Օրլօվ, Բէյլրև և ուրիշները: Աշակերտներին թոյլ է տրված յաճախել համալսարանի անատոմիական թատրօնը և լաբօրատօրիան:

Դիմել ուսումնարանի հիմնադրին այս հասցէով՝ Николаевская площадь, домъ Штейфона, доктору Немировскому. (№ 76) 3—4